# ԱՐԵՎՄՈՒՏՔ–ՎՐԱՍՏԱՆ ԽՈՐԸ ԱՌՃԱԿԱՏՄԱՆ 9-ԱՄՍՅԱ ՓՈՒԼԸ. ԱՂՄԿԱՀԱՐՈՒՅՑ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԵՏՆԱՊԱՏԿԵՐԸ

**Վահե Դ. Սարգսյան**

*Սեղմագիր*

*Աշխատանքում ներկայացված են 2024 թ. ապրիլ-հոկտեմբեր (մինչ հոկտեմբերի 26-ին կայացած խորհրդարանական ընտրությունները) ժամանակահատվածում Վրաստանում և վերջինիս շուրջ տեղի ունեցած զարգացումները՝ «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին» օրինագծի վերաշրջանառումը, ընդունումը, դրանով պայմանավորված նախընտրական գործընթացներն ու Վրաստանի շուրջ տեղի ունեցած բարդ զարգացումները: Նշված ինն ամիսներին տեղի ունեցած գործընթացները միայն առաջին հայացքից էին վերաբերում նշված օրինագծին, ապա՝ օրենքին: Իրականում այդ բարդագույն պատմափուլը ճակատագրական նշանակություն ունեցավ թե՛ Վրաստանի ինքնիշխանության վերականգնման, թե՛ Վրաստանի՝ իրապես վրացակենտրոն արևելումի, թե՛ Արևմուտքի՝ Այսրկովկասի վրա տարածվող ազդեցության գոտու խմբագրման տեսանկյունից: Աշխատանքում նշված իրողությունների համակողմանի ուսումնասիրման և վերհանման միջոցով բացահայտվում է թե՛ Արևմուտքի իրական նպատակը, թե՛ Վրաստանի իշխանությունների մղած պայքարի բուն իմաստը: Վրաստանի ղեկավարությունը նշված ճակատագրական ժամանակահատվածում ևս մի կարևոր քայլ կատարեց Մ. Սաակաշվիլիի իշխանության ժամանակաշրջանում արմատակալած արևմտյան կապանքներից ազատվելու ուղղությամբ: Արդյունքում՝ երկիրը դադարեց լինել Արևմուտքի ձեռքում մանրադրամ և, ամենակարևորը, չգնաց ՌԴ-ի դեմ 2-րդ ճակատի ռազմահենադաշտի վերածվելու կործանարար ուղով:*

# 9- МЕСЯЧНАЯ ГЛУБОКАЯ КОНФРОНТАЦИЯ ЗАПАД–ГРУЗИЯ. ПОДОПЛЁКИ ПРИНЯТИЯ НАШУМЕВШЕГО ЗАКОНА И БОРЬБЫ С НИМ

**Ваэ Д. Саркисян**

*Аннотация*

*В работе представлены события, произошедшие в Грузии и вокруг нее в период, длящийся с апреля по октябрь 2024 г. (до парламентских выборов, состоявшихся 26 октября): рециркуляция и принятие законопроекта «О прозрачности иностранного влияния», вызванные этими действиями предвыборные процессы и сложные развития вокруг Грузии. Все процессы, произошедшие в течение этих девяти месяцев, только на первый взгляд касались упомянутого законопроекта, а затем и закона. Фактически, этот сложный исторический период имел роковое значение как с точки зрения восстановления суверенитета Грузии, ее истинно грузиноцентричной ориентации, так и откорректирования сферы влияния Запада на Закавказье. Посредством всестороннего рассмотрения упомянутых в работе реалий раскрывается как реальная цель Запада, так и истинный смысл борьбы грузинских властей. В упомянутый судьбоносный период руководство Грузии сделало еще один важный шаг в сторону избавления от западного влияния, укоренившегося еще во времена правления Саакашвили. В результате страна перестала быть пешкой в руках Запада и, самое главное, не пошла по пагубному пути превращения в плацдарм для открытия 2-го фронта против РФ.*

## THE 9-MONTH PHASE OF THE WEST–GEORGIA DISCORDANCE: THE AFTERMATH OF THE ADOPTION OF THE OUTRAGEOUS LAW AND THE BACKGROUND OF THE STRUGGLE AGAINST IT

**Vahe D. Sargsyan**

*Summary*

*The work presents the developments that took place in and around Georgia during the period from April to October 2024 (before the parliamentary elections held on October 26), the recirculation and adoption of "The Transparency of Foreign Influence" bill, the pre-election processes conditioned by it, and the complex developments that took place around Georgia. At first glance, the processes that took place during these nine months seemed to relate only to the bill, and then to the law. In reality, this complex historical period was of fatal importance both from the point of view of the restoration of Georgia's sovereignty, and the editing of Georgia's truly Georgian-centered reformation, and the Western zone of influence extending to the Transcaucasia. Through the comprehensive disclosure of the realities mentioned in the work, both the real goal of the West and the true meaning of the struggle waged by the Georgian authorities are revealed. During this fateful period, the Georgian leadership took another important step towards breaking free from the Western shackles that had taken root during M. Saakashvili's rule. As a result, the country ceased to be a pawn in the hands of the West and, most importantly, did not take the destructive path of becoming a bridgehead for a second front against Russia.*

**Վահե Դ. Սարգսյան**[1]

# ԱՐԵՎՄՈՒՏՔ–ՎՐԱՍՏԱՆ ԽՈՐԸ ԱՌՃԱԿԱՏՄԱՆ 9-ԱՄՍՅԱ ՓՈՒԼԸ. ԱՂՄԿԱՀԱՐՈՒՅՑ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԵՏՆԱՊԱՏԿԵՐԸ[2]

**(Մաս III,** նախորդները տես՝ **I**, **II**)

## Օրենքի կիրառման մեկնարկը՝ Արևմուտքի նոր պատժամիջոցների պայմաններում

Վրաստանի վարչապետի կողմից խիստ քննադատության արժանացան ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի՝ Վրաստանում և Մոլդովայում ԱՄՆ-ի քաղաքականության վերաբերյալ լսումների ժամանակ հնչեցված հայտարարությունները և գնահատականները, որտեղ զեկուցումներով հանդես են եկել ԱՄՆ-ի Պետքարտուղարության և ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության ներկայացուցիչները: Լսումներին նշվել է, որ Մոլդովայի՝ Արևմուտքի հետ մերձեցման ցանկության ֆոնին Վրաստանը շրջվում է այս ճանապարհից: Վրաստանի իշխանություններին կոչ է արվել հետ կանչել *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքը և հոկտեմբերին անցկացնել արդար խորհրդարանական ընտրություններ[3]: Ըստ Ի. Կոբախիձեի՝ ԱՄՆ-ի Կոնգրեսում Վրաստանի վերաբերյալ արված գնահատականներն անարդար էին, դրանք հարձակում էին վրացական պետության վրա կոնկրետ քաղաքական գործիչների կողմից, ինչը հակաարդյունավետ է Վաշինգտոնի հետ հարաբերությունների վերականգնման ֆոնին, որն առաջարկվում է Թբիլիսիի կողմից: Վրաստանի վարչապետը հավելել է նաև, որ երկրի հասցեին հնչող քննադատությունները խոսում են այն մասին, որ Վրաստանի հետ կապված որոշակի շահեր կան: *«Սրանից կարելի է մեկ պարզ եզրակացություն անել. Վրաստանի նկատմամբ կա հետաքրքրություն, որը չկա Մոլդովայի հանդեպ: Հակառակ դեպքում, ոչ ոք չի կարողանա բացատրել, թե ինչո՞ւ չեն խոսում Մոլդովայում առկա խնդիրների մասին»,* – ասել է Ի. Կոբախիձեն[4]: Շարունակելով

---

[1] Պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Սփյուռքի և հայ գաղթօջախների պատմության բաժնի գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Վրաստանի հայության, մասնավորապես՝ ջավախահայության հիմնախնդիրներ, Հայաստան–Վրաստան հարաբերություններում առկա բազմաբնույթ հիմնահարցեր, Վրաստանի տեղաբնիկ ժողովուրդների ու ազգային փոքրամասնությունների խնդիրներ: Հեղինակ է 1 մենագրության և շուրջ 35 հոդվածի:

[2] Հոդվածը խմբագրություն է հանձնվել 12.12.2024 թ.:

[3] House Foreign Affairs Committee, A Look at U.S. Policy in Georgia and Moldova Ahead of Their 2024 Elections Subcommittee Hearing. 23.07.2024, https://foreignaffairs.house.gov/hearing/a-look-at-u-s-policy-in-georgia-and-moldova-ahead-of-their-2024-elections/# (բեռնման օրը՝ 27.11.2024).

[4] Атака на грузинское государство – премьер о заявлениях в Конгрессе США. 24.07.2024, https://sputnik-

ներկայացնել աղմկահարույց օրենքի ընդունման կապակցությամբ Արևմուտքից եկող ազդակները՝ նշենք, որ հուլիսի 29-ին ԱԳ նախարարությունում տեղի ունեցավ Եվրահանձնաժողովի ընդլայնման քաղաքականության շրջանակներում 2023 թ. նոյեմբերի 8-ին Վրաստանի համար սահմանված ինը քայլերի կատարման մասին շնորհանդեսը, որին մասնակցել են Վրաստանում հավատարմագրված ԵՄ անդամ-երկրների և գործընկեր այլ երկրների դեսպանների, ինչպես նաև դեսպանությունների ներկայացուցիչները: Միջոցառման ժամանակ Վրաստանում ԵՄ պատվիրակության ղեկավարի տեղակալ Ասունսիոն Սանչես Ռուիսը կրկին հիշեցրել է Եվրամիության՝ *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքի ընդունման հետ կապված հունիսի 27-ի եզրակացությունը և հայտնել, որ այդ իսկ պատճառով Վրաստանի՝ Եվրամիությանն անդամակցության գործընթացը կասեցված է[5]:

Հուլիսի 30-ին Արդարադատության նախարար Ռատի Բրեգաձեն արդեն պաշտոնապես հայտարարեց, որ նախարարությունը պատրաստել է ամեն ինչ *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքի կիրառման համար, և գրանցումը կսկսվի օգոստոսի 1-ից[6]: Նախարարը նաև զգուշացրել է պատժամիջոցների մասին, որոնք կհետևեն, եթե կազմակերպությունները հրաժարվեն գրանցվելուց, իսկ դա ենթադրում է 25 հազ. լարի տուգանք[7]: Մեկ օր անց՝ հուլիսի 31-ին, ԱՄՆ-ի պետքարտուղար Էնթոնի Բլինքենը հայտարարել է Վրաստանի կառավարությանը $95 մլն չափով օգնությունը դադարեցնելու մասին՝ Վրաստանի հետ հարաբերությունների վերանայման շրջանակներում: Ըստ պետքարտուղարի՝ վերոնշյալ օգնությունն ուղղակիորեն ձեռնտու է Վրաստանի

---

georgia.ru/ 20240724/ataka-na-gruzinskoe-gosudarstvo--premer-o-zayavleniyakh-v-kongresse-ssha-289152693.html (բեռնման օրը՝ 27.11.2024).

[5] Deputy Head of EU Delegation to Georgia: EU side by side with Georgians who expressed willingness to join EU. 29.07.2024, https://1tv.ge/lang/en/news/deputy-head-of-eu-delegation-to-georgia-eu-side-by-side-with-georgians-who-expressed-willingness-to-join-eu/ (բեռնման օրը՝ 27.11.2024).

[6] Օգոստոսի 1-ից պաշտոնապես մեկնարկեց գրանցման գործընթացը: Մանրամասները տե՛ս Регистрация "иноагентов" началась в Грузии. 01.08.2024, https://sputnik-georgia.ru/20240801/registratsiya-inoagentov-nachalas-v-gruzii-289273446.html (բեռնման օրը՝ 01.12.2024). Վրաստանի խորհրդարանի փոխխոսնակ Նինո Ցիլոսանին նույն օրը հայտարարեց, որ նրանք, ովքեր կհրաժարվեն կամովին գրանցվել օտարերկրյա ուժերի, ՀԿ-ների և ԶԼՄ-ների շահերը աջակցող կազմակերպությունների ռեեստրում, կգրանցվեն հենց Վրաստանի արդարադատության նախարարության կողմից, քանի որ օրենքում նախատեսված է նմանատիպ նորմ [տե՛ս Отказников по закону об "иноагентах" в Грузии зарегистрируют заочно – депутат. 01.08.2024, https://sputnik-georgia.ru/20240801/otkaznikov-po-zakonu-ob-inoagentakh-v-gruzii-zaregistriruyut-zaochno--deputat-289292480.html (բեռնման օրը՝ 01.12.2024)]:

[7] Брегадзе: Нарушение закона «О прозрачности иностранного влияния» подразумевает для организаций штраф в размере 25 тысяч лари. 30.07.2024, https://www.apsny.ge/2024/pol/1722346569.php (բեռնման օրը՝ 27.11.2024).

կառավարությանը: *«...ԱՄՆ-ը կշարունակի աջակցությունն այն ծրագրերին և գործողություններին, որոնք օգուտ են բերում Վրաստանի ժողովրդին՝ ամրապնդելով ժողովրդավարությունը, օրենքի գերակայությունը, անկախ լրատվամիջոցները և տնտեսական զարգացումը»,* – նշել է Է. Բլինքենը՝ հավելելով, որ 32 տարվա բարեկամության և գործընկերության ընթացքում Միացյալ Նահանգների ժողովուրդը Վրաստանին տրամադրել է ավելի քան $6,2 մլրդ օգնություն[8]:

Արձագանքելով ԱՄՆ-ի որոշմանը՝ իշխող «Վրացական երազանք» կուսակցության պատգամավոր Բեկա Օդիշարիան հայտարարել է, որ ԱՄՆ-ի պետքարտուղարի հայտարարությունն ափսոսանք է առաջացնում, իսկ վրաց ժողովուրդն, ըստ պատգամավորի, պատժվում է միայն այն պատճառով, որ ամրապնդում է իր ինքնիշխանությունը[9]: Օգոստոսի 1-ից կազմակերպությունների գրանցման գործընթացը սկսելու հաջորդ իսկ օրը՝ օգոստոսի 2-ին, Եվրամիությունը կրկին մտահոգություն է հայտնել Վրաստանում *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքի ուժի մեջ մտնելու կապակցությամբ և քննարկել Վրաստանի կառավարությանը հատկացվող օգնությունը դադարեցնելու հնարավորությունը. ԵՄ մամուլի խոսնակ Փիթեր Ստանոն այս մասին հայտարարելով՝ հիշեցրել է նաև, որ Եվրամիությունն արդեն իսկ սառեցրել է €30 մլն ռազմական աջակցությունը Խաղաղության եվրոպական հիմնադրամի միջոցով[10]:

### Վրաստանի Սահմանադրական դատարանի որոշումները

Օգոստոսի 29-ից Վրաստանի Սահմանադրական դատարանը սկսեց քննել *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքի դեմ հայցերը, որոնք ներկայացրել են Վրաստանի խորհրդարանի 38 ընդդիմադիր պատգամավոր, 122 հասարակական կազմակերպություն, 2 լրատվամիջոց և Վրաստանի նախագահ Ս. Զուրաբիշվիլին: Հայցերի հեղինակները կարծում են, որ օրենքը Վրաստանի բարեկամներին և թշնամիներին դնում է նույն մակարդակի վրա, պիտակավորում է և խոչընդոտում երկրի ինտեգրմանը ԵՄ-ին: Հայցվորները միջնորդել են կասեցնել վիճահարույց օրենքը՝ գործն

---

[8] U.S. Department of State, United States to Pause Assistance to the Government of Georgia, Press Statement Antony J. Blinken, Secretary of State. 31.07.2024, https://www.state.gov/united-states-to-pause-assistance-to-the-government-of-georgia/ (բեռնման օրը՝ 01.12.2024).

[9] Народ Грузии наказывают за укрепление суверенитета – депутат о приостановке помощи США. 01.08.2024, https://sputnik-georgia.ru/20240801/narod-gruzii-nakazyvayut-za-ukreplenie-suvereniteta--deputat-o-priostanovke-pomoschi-ssha-289282206.html (բեռնման օրը՝ 01.12.2024).

[10] La UE reitera que la ley de agentes extranjeros es un retroceso y considera suspender ayudas a Georgia. 02.08.2024, https://www.europapress.es/internacional/noticia-ue-reitera-ley-agentes-extranjeros-retroceso-considera-suspender-ayudas-georgia-20240801171801.html (բեռնման օրը՝ 01.12.2024).

ըստ էության քննելու ընթացքում: Որոշվել է վերոնշյալ չորս դատական հայցերը միավորել մեկ գործի մեջ և քննել դրանք միասին: Սահմանադրական դատարանի նախագահ Մերաբ Տուրավան նշել է, որ Վրաստանի փաստաբանական ընկերությունների ասոցիացիայի (փաստաբանների արհմիություն)՝ օգոստոսի 29-ից երկու օր առաջ Սահմանադրական դատարան ներկայացված հայցը կքննվի առանձին և առանց բանավոր լսումների[11]: Օգոստոսի 31-ին Վրաստանի Սահմանադրական դատարանի պլենումն ավարտեց *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքի դեմ հայցի լսումները: Հայտարարվեց, որ գործին ավելացվել է նաև Վրաստանի նախագահի մեկ այլ՝ Վրաստանի եվրաինտեգրման համար օրինագծի սպառնալիքի մասին ապացույցը[12]:

Հոկտեմբերի 9-ին հրապարակվեց Վրաստանի Սահմանադրական դատարանի որոշումն, ըստ որի՝ դատարանը մերժել է հայցի քննության ընթացքում *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքի կասեցումն իբրև ժամանակավոր միջոց կիրառելու՝ հայցվորների պահանջը: ՍԴ-ն որոշել է *«չհամաձայնվել հայցվորի միջնորդությանը՝ կասեցնելու վիճարկվող նորմերի գործողության ժամկետը մինչև գործով վերջնական որոշման կայացումը»*[13]: Սահմանադրական դատարանը համարել է, որ գործի քննության ընթացքում չի բացահայտվել, որ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը և/կամ Հանրային ռեգիստրի ազգային գործակալությունից հարցման դեպքում վերջինիս տեղեկատվության տրամադրումը անտանելի բեռ է կազմակերպությունների համար և անհնարին է դարձնում նրանց գործունեությունը: Եզրակացության մեջ նշվում է. հայցվորները չեն կարողացել դատարանին համոզել, որ վերջնական որոշման կայացումից առաջ հասարակության վստահությունը «բացասական ենթատեքստ» ունեցող ՀԿ-ների և ԶԼՄ-ների գործունեության նկատմամբ այնքան կխաթարվի, և նրանց գործարար համբավը կտուժի այն աստիճան, որ դրան, ամենայն հավանականությամբ, կհաջորդի նրանց աշխատանքի ամբողջական կաթվածահար լինելը,

---

[11] Иски против закона об "иноагентах" в Грузии – суд взвешивает все за и против. 29.08.2024, https://sputnik-georgia.ru/20240829/iski-protiv-zakona-ob-inoagentakh-v-gruzii---sud-vzveshivaet-vse-za-i-protiv-289627139.html (բեռնման օրը՝ 01.12.2024).

[12] Конституционный суд Грузии завершил слушания по делу о законе об "иноагентах". 31.08.2024, https://sputnik-georgia.ru/20240831/konstitutsionnyy-sud-gruzii-zavershil-slushaniya-po-delu-o-zakone-ob-inoagentakh-289674925.html (բեռնման օրը՝ 04.12.2024).

[13] საქართველოს საკონსტიტუციო სასამართლო, საქართველოს პრეზიდენტი, საქართველოს პარლამენტის წევრები: თამარ კორძაია, ანა ნაცვლიშვილი, ლევან ბეჟაშვილი და სხვები (სულ 38 დეპუტატი), ა(ა)იპ „ინფორმაციის თავისუფლების განვითარების ინსტიტუტი“, ა(ა)იპ „უფლებები საქართველო“, ა(ა)იპ „სამოქალაქო საზოგადოების ფონდი“ და სხვები (სულ 122 მოსარჩელე), შპს „საინფორმაციო ცენტრების ქსელი“ და ა(ა)იპ „სტუდია მონიტორი“ საქართველოს პარლამენტის წინააღმდეგ, 9 ოქტომბერი, 2024, https://www.constcourt.ge/ka/judicial-acts?legal=17223 (բեռնման օրը՝ 07.12.2024).

կամ վերջիններիս վստահության վերականգնումն անհնարին կդառնա: Դատարանին չեն համոզել նաև այն փաստարկները, որ *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքը վնասում է Վրաստանի եվրաատլանտյան ինտեգրման գործընթացին, ինչի արդյունքում Վրաստանը կկորցնի ԵՄ-ին և ՆԱՏՕ-ին ինտեգրվելու իրական հնարավորությունը:

Հիշեցնենք՝ հայցվորները պնդել են, որ օրենքը հակասում է Վրաստանի Սահմանադրության 78-րդ հոդվածին, որը սահմանադրական մարմիններին պարտավորեցնում է իրենց լիազորությունների սահմաններում ձեռնարկել բոլոր միջոցները՝ ապահովելու Վրաստանի լիարժեք ինտեգրումը եվրատլանտյան կառույցներին: *«Ելնելով վերոգրյալից՝ հայցվորը չի հիմնավորել, թե ինչու է օրենքը առաջացնում այնպիսի հետևանքներ, որոնք հնարավոր չէ շտկել՝ այն հակասահմանադրական ճանաչելով: Միաժամանակ չի բացահայտվել, որ վիճարկվող օրենքի կասեցումը հայցվորի մատնանշած սպառնալիքները կանխելու արդյունավետ մեխանիզմ է: Հաշվի առնելով վերը նշված բոլորը, քննարկվող գործում հիմք չկա վիճարկվող օրենքը կասեցնելու՝ Վրաստանի Սահմանադրության 78-րդ հոդվածի նպատակները պաշտպանելու նկատառումով: ...Հետևաբար, որևէ հիմնավորում չի հայտնաբերվել, թե ինչու օրենքի կասեցումը՝ մինչև դրա ըստ էության քննարկումը, կկանխի Եվրամիության հետ հարաբերությունների վատթարացման ռիսկերը»,* – ասված է եզրակացության մեջ:

### Առաջին ցուցանիշներն օրենքի կիրարկումից հետո. նոր բանավեճ՝ տոկոսային հարաբերակցության շուրջ

2024 թ. սեպտեմբերի 2-ին արտասահմանյան ուժերի շահերը պաշտպանող կազմակերպությունների ռեեստրում կամավոր գրանցման ժամկետն ավարտվեց. հրապարակված տվյալներով՝ մոտ 50 կազմակերպություն հայտ է ներկայացրել ռեգիստր, որում նշել են, որ համապատասխանում են գրանցման չափանիշներին, սակայն չեն պատրաստվում գրանցվել: Ըստ Արդարադատության նախարարի առաջին տեղակալ Թամար Տղեշելաշվիլիի՝ ժամկետի ավարտի պահին գրանցման համար դիմել են երկրի 476՝ օտարերկրյա աղբյուրներից ֆինանսավորվող ոչ կառավարական կազմակերպություններ և լրատվամիջոցներ[14]: Ըստ փոխնախարարի բացատրության՝ ժամկետը լրանալուց հետո գրանցումը ենթակա է տուգանքի, և ՀԿ-ները, որոնք կհրաժարվեն գրանցվելուց, դեռ

[14] Истек срок добровольной регистрации в реестре по закону об "иноагентах" в Грузии. 02.09.2024, https://sputnik-georgia.ru/20240902/istek-srok-dobrovolnoy-registratsii-v-reestre-po-zakonu-ob-inoagentakh-v-gruzii-289697707.html (բեռնման օրը՝ 04.12.2024).

կբացահայտվեն մոնիտորինգի արդյունքում և կգրանցվեն գրանցամատյանում, կվճարեն ուշացման վճարներ այնքան ժամանակ, որքան կարող են, որից հետո միանգամայն այլ ռեժիմ կարող է միացվել:

Օրենքը Սահմանադրական դատարանում քննարկելու փուլում արևմտյան լրատվամիջոցները լայնորեն տարածում էին Վրաստանում գործող և օրենքին, իսկ այդ փուլում՝ նաև գրանցմանը դեմ դուրս եկած ՀԿ դաշտի ներկայացուցիչների տեսակետները՝ հայտարարելով, որ «*Վրաստանում գործող մոտ 30.000 ՀԿ-ներից միայն մոտ 1,5%-ն է գրանցվել որպես օտարերկրյա գործակալ մինչև սեպտեմբերի 2-ի վերջնաժամկետը*»[15]: Նույնը հայտարարել էր նաև «Լելոն Վրաստանի համար» ընդդիմադիր կուսակցության առաջնորդ Մամուկա Խազարաձեն, ինչին ի պատասխան իշխող «Վրացական երազանք» կուսակցության գործադիր քարտուղար Մամուկա Մդինարաձեն հայտարարեց, որ Վրաստանի ՈԿԿ-ների մեծ մասը գրանցված է միայն թղթի վրա, և հայտարարությունները, թե դրանց միայն 1%-ն է կամավոր գրանցվել օտար ուժերի շահերը պաշտպանող կազմակերպությունների ռեեստրում, «*կեղտոտ սուտ է*»[16]:

Հոկտեմբերի 19-ին Վրաստանի խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլին էլ հայտարարեց, որ այդ օրվա դրությամբ Թափանցիկության ռեգիստրում գրանցված է 144 կազմակերպություն, իսկ ավելի քան 300 կազմակերպությունների գրանցման դիմումները ընթացքի մեջ են: Ըստ խորհրդարանի նախագահի՝ այդ օրվա դրությամբ Թափանցիկության ռեգիստրում գրանցված կազմակերպությունների թիվն արդեն գերազանցել էր օրենքը վիճարկող կազմակերպությունների թվին[17]:

Սեպտեմբերի 5-ին *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքը հակասահմանադրական ճանաչելու վերաբերյալ Վրաստանի Սահմանադրական դատարան ներկայացված հայցերին է անդրադարձել Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն՝ դրանք անվանելով անհեռանկարային և մատնանշելով այն հանգամանքը, որ մի շարք կազմակերպություններ արդեն գրանցված են հատուկ գրանցամատյանում՝ ապացուցելով, որ խարանման և սահմանափակումների խնդիր չկա: Վարչապետն արձագանքել է նաև

---

[15] Грузинские НПО отказались регистрироваться в реестре иноагентов. 10.09.2024, https://ru.euronews.com/2024/ 09/10/georgia-foreign-agents-law (բեռնման օրը՝ 04.12.2024).

[16] Грязная ложь – лидер "Грузинской мечты" о процессе регистрации "иноагентов". 03.09.2024, https://sputnik-georgia.ru/20240903/gryaznaya-lozh--lider-gruzinskoy-mechty-o-protsesse-registratsii-inoagentov-289702929.html (բեռնման օրը՝ 04.12.2024).

[17] Шалва Папуашвили: Число организаций, зарегистрированных в Реестре прозрачности, превысило количество организаций, оспаривающих закон. 18.10.2024, http://ru.gruzinform.ge/news/63846/Salva-papuaSvili-Cislo-organizacij-zaregistrirovanniK-v-reestre-prozraCnosti-previsilo-koliCestvo-organizacij-osparivaUSiK-zakon.html (բեռնման օրը՝ 04.12.2024).

ընդդիմադիրների հայտարարություններին (Մամուկա Խազարաձե և ուրիշներ), ըստ որոնց՝ ՀԿ-ներից միայն մոտ 1,5%-ն է գրանցվել: Նրա խոսքով՝ դա «*պարզ սպեկուլյացիա էր*». հայցվորների թիվը շուրջ 100 է, իսկ 450-ը դիմել են Արդարադատության նախարարություն, եթե սա 1% է, ապա ստացվում է, որ հայցվորների թիվը 1%-ից շատ ավելի քիչ է: Ըստ նրա՝ պարզ չէ, թե ինչպե՞ս կարելի է բողոքարկել մի օրենք, որը նախատեսում է մեկ բան՝ օտարերկրյա ֆինանսավորման 20%-ից ավելի ստանալու դեպքում դիմել Արդարադատության նախարարություն և ֆինանսավորման մասին տեղեկատվություն տեղադրել կայքում: Վարչապետի խոսքով՝ արտերկրից ֆինանսավորվող հասարակական կազմակերպությունների թիվը չի կարող գերազանցել հազարը: *«Ես վիճակագրություն չունեմ, բայց կարծում եմ, որ արտերկրից ֆինանսավորվող կազմակերպությունների կեսից ավելին իրականում կապ է հաստատել Արդարադատության նախարարության հետ, և դա կարող է լինել նույնիսկ երկու երրորդը՝ 80%-ը»,* – հայտարարել է վարչապետը՝ հավելելով, որ առավելագույնը 10 կազմակերպություն (այսպես կոչված՝ էլիտար ՀԿ-ները)[18] ստանում է ֆինանսավորման 90%-ը, իսկ մնացած 500-ը, եթե համարենք 1000 կազմակերպություն, ստանում է ֆինանսավորման 10%-ը[19]: Հաջորդ օրը՝ սեպտեմբերի 6-ին, Ի. Կոբախիձեն արձագանքել է ԱՄՆ-ի սենատոր Ջին Շահինը, որը մեղադրել է Կոբախիձեին, թե վերջինս, իբր, ԱՄՆ-ից պահանջել է դադարեցնել Վրաստանում գործող բոլոր ՈԿԿ-ների ֆինանսավորումը: Հիշեցնենք, որ սենատոր Ջ. Շահինը նախօրեի իր հարցազրույցում հայտարարել էր, որ Վրաստանի վարչապետի հետ հանդիպման ժամանակ (սենատորներ Ջին Շահինը և կոնգրեսական Մայք Թերները օգոստոսի 9-11-ն այցելել էին Վրաստան և հանդիպումներ ունեցել պետական պաշտոնյաների, ընդդիմության և հասարակական կազմակերպությունների հետ)[20] Ի. Կոբախիձեն իրեն խնդրել է դադարեցնել ֆինանսավորումը բոլոր քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, որոնք կարող են քննադատել «Վրացական երազանքի» կառավարությանը[21]: Ի. Կոբախիձեն

---

[18] Գրանցմանը դեմ են եղել հիմնականում ամենահարուստ և ազդեցիկ ՀԿ-ները, այդ թվում՝ «International Transparency Georgia»-ն («Միջազգային թափանցիկություն-Վրաստան»), Վրաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան և Տեղեկատվության ազատության զարգացման ինստիտուտը (IDFI):

[19] Վարչապետը նշել է նաև, որ այն կազմակերպությունները, ովքեր իսկապես ծառայում են պետության շահերին, նրանք խնդիրներ չեն ունեցել կապ հաստատելու արդարադատության նախարարության հետ, բայց նրանք, ովքեր թաքցնելու բան ունեն, չեն դիմում արդարադատության նախարարություն, և այստեղ պարզ գիծ է քաշվելու [տե՛ս Премьер Грузии назвал бесперспективным дело против закона об "иноагентов" в суде. 05.09.2024, https://sputnik-georgia.ru/20240905/net-perspektivy-premer-gruzii-ob-iskakh-protiv-zakona-ob-inoagentov-289751069.html (բեռնման օրը՝ 05.12.2024).

[20] U.S. Embassy in Georgia, Senator Shaheen and Congressman Turner's Press conference, August 11, 2024. Tbilisi, https://ge.usembassy.gov/senator-shaheen-and-congressman-turners-press-conference/ (բեռնման օրը՝ 05.12.2024).

[21] Sen. Shaheen: GD Wants Georgia to Be a Dictatorship, Not a Democracy. 06.09.2024.

սենատորի հայտարարությանը շատ կոպիտ է արձագանքել՝ որակելով այն իբրև *«բացահայտ սուտ»* և ցավել, որ նման սուտը թույլ է տալիս մի մարդ, ով ունի շատ բարձր կարգավիճակ՝ ԱՄՆ սենատոր է[22]:

**Վրաստանի իշխանությունների քայլը՝ պետականության ամրապնդման նոր նշաձող**

Սեպտեմբերի 9-ին վարչապետ Ի. Կոբախիձեն հայտարարեց կարևոր նախաձեռնության մասին: Հաշվի առնելով, որ օտարերկրյա դոնորները սպառնացել են դադարեցնել վրացական ոչ կառավարական կազմակերպությունների ֆինանսավորումը, եթե նրանք գրանցվեն Վրաստանի արդարադատության նախարարությունում, վարչապետը հայտարարեց, որ այդ իսկ պատճառով իշխանությունները որոշել են դրամաշնորհային ծրագիր ստեղծել վրացական հասարակական կազմակերպությունների համար: Ծրագիրը ֆինանսավորվելու է պետբյուջեից՝ Վրաստանի հարկատուների հաշվին: Ի. Կոբախիձեի խոսքով՝ դրամաշնորհային հիմնադրամի պատշաճ գործունեության համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ և ֆինանսական հիմքերը կպատրաստվեն առաջիկա երկու ամսում, իսկ առաջին դրամաշնորհային ծրագրերը կսկսեն ֆինանսավորվել 2025 թ. հունվարից: *«Մոտ ապագայում մենք կկիսվենք մանրամասն տեղեկություններով դրամաշնորհային ծրագրերի մասին, որոնք կֆինանսավորվեն վրաց ժողովրդի շահերին համապատասխան որոշված առաջադրանքների կապարման համար»,* – ընդգծել է Ի. Կոբախիձեն՝ հավելելով, որ ՀԿ-ները, որոնք լավ աշխատանք են կատարում և սպասարկում են վրաց ժողովրդի շահերը, պետական բյուջեից երկու անգամ ավելի շատ ֆինանսավորում կստանան, քան մինչ այժմ ստացել են օտարերկրյա դոնորներից[23]: Վարչապետը կոչ է արել ՀԿ-ներին, որոնք ցանկանում են դառնալ *«վրաց ժողովրդի ազդեցության գործակալները»* և հետամուտ լինել Վրաստանի ազգային շահերին, դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ակտիվորեն մասնակցել մրցույթներին:

---

https://civil.ge/archives/622795 (բեռնման օրը՝ 05.12.2024), հմմտ.՝ Q+A with Sen. Jeanne Shaheen, The New Hampshire Democrat discusses her recent trip to the Republic of Georgia and her concerns about the nation's anti-democratic trajectory, National Journal, 06.09.2024, https://www.nationaljournal.com/s/726077/qa-with-sen-jeanne-shaheen/?unlock=WQVACHTE5JNQ6FXL (բեռնման օրը՝ 05.12.2024).

[22] Чистая ложь – премьер-министр Грузии ответил сенатору США. 06.09.2024, https://sputnik-georgia.ru/20240906/ chistaya-lozh--premer-ministr-gruzii-otvetil-senatoru-ssha-289774995.html (բեռնման օրը՝ 05.12.2024).

[23] Правительство Грузии создает грантовый фонд для НПО – премьер. 09.09.2024, https://sputnik-georgia.ru/ 20240909/pravitelstvo-gruzii-sozdaet-grantovyy-fond-dlya-npo--premer-289812965.html (բեռնման օրը՝ 05.12.2024).

**ԱՄՆ–Արևմուտքի պատժամիջոցների «աշնանային» փուլը. Վրաստանի իշխանությունների հակադարձումները**

Վրաստանի իշխանությունները, ինչպես և սպասելի էր, խստորեն արձագանքեցին սեպտեմբերի 12-ին ԱՄՆ-ի Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նիստի ժամանակ որոշ սենատորների կողմից Վրաստանի իշխանությունների հասցեին հնչեցված վիրավորական արտահայտություններին: Ինչպես նշեցինք վերևում՝ Հանձնաժողովում տեղի ունեցած *«Հակա-ՀԿ օրենքները և ժողովրդավարական ռեպրեսիայի այլ գործիքները»* թեմայով լսումների շրջանակներում քննարկվել են Վրաստանում տեղի ունեցող զարգացումները *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքի ընդունումից հետո: Հանդես գալով Հանձնաժողովում՝ սենատոր Ջիմ Ռիշը վիրավորել էր Վրաստանի իշխանություններին՝ ասելով, որ հոկտեմբերի ընտրություններին վրաց ժողովուրդը հնարավորություն կունենա *«դուրս շպրտել սրիկաներին և սեփական ապագան վերցնել իր ձեռքը»*[24]: Արձագանքելով սենատոր Ջ. Ռիշի վիրավորանքին՝ վարչապետ Ի. Կոբախիձեն հայտարարեց. *«Ռիշն ասել է, որ այս ընտրություններից հետո սրիկաները դուրս են մղվելու վրացական քաղաքականությունից: Կարծում եմ, որ դա ճիշտ է: Դա մեր խոստումն է: Այս ընտրություններից հետո վրացական քաղաքականության մեջ պետք է արգելվեն բոլոր, նրա տերմինով ասված, սրիկաները»*[25]: Ի. Կոբախիձեն նկատի է ունեցել իշխող «Վրացական երազանք» կուսակցության հայտարարություններն առ այն, որ, եթե իշխող ուժը հոկտեմբերի 26-ի խորհրդարանական ընտրություններում սահմանադրական մեծամասնություն ստանա, խոստանում է *«բազմաթիվ հանցագործություններ համար»* նախկինում իշխող «Միացյալ ազգային շարժումը» և դրա ուղեծրում գտնվող կազմակերպությունները հակասահմանադրական ճանաչելու վերաբերյալ իրավական գործընթաց սկսել: Լսումներին զեկույցով հանդես եկած խոսնակներից «Թրանսփարենսի Ինթերնեշնլ–Վրաստան» (Միջազգային թափանցիկություն–Վրաստան) արևմտյան կազմակերպության գործադիր տնօրեն Էկա Գիգաուրիի մասնակցությունը վարչապետն անվանել է *«հերթական լյուսպրացիա»*, ում խոսքը *«Սերգո Օրջոնիկիձեի սովորական ելույթն էր»*[26]:

---

[24] Foreign Relations Committee, Full Committee Hearing, “Anti-NGO Laws and Other Tools of Democratic Repression”. Thursday, September 12th, 2024, https://www.foreign.senate.gov/hearings/anti-ngo-laws-and-other-tools-of-democratic-repression (քեռնման օրը՝ 05.12.2024).

[25] Сенатор Риш прав, негодяям не место в политике Грузии – премьер. 13.09.2024, https://sputnik-georgia.ru/ 20240913/senator-rish-prav-negodyayam-ne-mesto-v-politike-gruzii--premer-289876926.html (քեռնման օրը՝ 06.12.2024).

[26] Կուսակցական ականավոր գործիչ, ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի նախագահ, Ադրբեջանում,

Անդրադառնալով *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքի ընդունման պատճառով Վրաստանի եվրաինտեգրման գործընթացի կասեցման մասին հայտարարություններին՝ խորհրդարանի Միջազգային հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Նիկոլոզ Սամխարաձեն իր հերթին դրանք անվանել է *«շահարկումներ»*: Ըստ խորհրդարանականի՝ 2023 թ. դեկտեմբերի 14-ին Վրաստանին շնորհվեց ԵՄ թեկնածու-երկրի կարգավիճակ, դեռ պետք է հոկտեմբերի 26-ին երկրում անցկացվեին ընտրություններ, և մրցակցային ընտրությունների ապահովումը հենց եվրաինտեգրման ճանապարհին Վրաստանի կողմից ձեռնարկվելիք 9 նոր քայլերից է: Ուստի, ըստ պատգամավորի, ընտրություններից առաջ որոշում չէր կարող կայացվել բանակցություններ սկսելու կամ նույնիսկ ինտեգրացիոն գործընթացը շարունակելու մասին[27]:

Սեպտեմբերի 16-ին ԱՄՆ-ը պաշտոնապես հայտարարեց, որ երկրի Ֆինանսների նախարարությունը *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքի դեմ գործողությունների վրա այս կամ այն կերպ ազդելու համար պատժամիջոցներ է սահմանել Վրաստանի երկու պետական պաշտոնյաների նկատմամբ (խոսքը Վրաստանի ՆԳՆ հատուկ հանձնարարությունների դեպարտամենտի ղեկավար Զվիադ Խարազիշվիլիի և նրա տեղակալ Միլերի Լագազաուրիի մասին էր), որոնք, ըստ տվյալ գերատեսչության հայտարարության, կապված են խաղաղ ցուցարարների և քաղաքական հակառակորդների դաժան բռնաճնշումների հետ, ինչպես նաև Վրաստանի երկու քաղաքացիների (խոսքը «Ալտ-Ինֆո» մեդիա հարթակի ղեկավարների մասին էր), ովքեր, ըստ հաղորդագրության, պատասխանատու են, մեղսակից կամ ուղղակի-անուղղակի մասնակցել են ժողովրդավարական գործընթացում և խաղաղ արտահայտման մեջ ներգրավված վրացիների խաղաղ հավաքների ազատության իրագործմանը բռնի կերպով ճնշելուն[28]: Նույն օրը ԱՄՆ-ի պետքարտուղար Է. Բլինքենը հայտարարեց, որ Պետքարտուղարությունը նաև լրացուցիչ քայլեր է ձեռնարկում վիզաների սահմանափակումներ մտցնելու ավելի քան 60 վրացիների և նրանց ընտանիքի անդամների նկատմամբ, ովքեր, ըստ Է. Բլինքենի, պատասխանատու են կամ մեղսակից են Վրաստանում ժողովրդավարությունը խարխլելու

---

Հայաստանում և Վրաստանում խորհրդային իշխանության հաստատման ակտիվ մասնակից Սերգո Օրջոնիկիձեն, ըստ Ի. Կոբախիձեի, ակտիվ դեր է ունեցել 1921 թ. Վրաստանի Առաջին Դեմոկրատական Հանրապետության կառավարությունը տապալելու գործում:

[27] Грузия приостановила процесс евроинтеграции? Ответ депутата. 13.09.2024, https://sputnik-georgia.ru/20240913/gruziya-priostanovila-protsess-evrointegratsii-otvet-deputata-289874509.html (բեռնման օրը՝ 06.12.2024).

[28] U.S. Department of the Treasury, Press Releases, Treasury Sanctions Georgian Officials and Extremists for Serious Human Rights Abuse. September 16, 2024, https://home.treasury.gov/news/press-releases/jy2580 (բեռնման օրը՝ 06.12.2024).

համար[29]: Մեկնաբանելով պատժամիջոցները՝ ԱՄՆ-ի պետքարտուղարության մամուլի ծառայության ղեկավար Մեթյու Միլլերը հայտարարել է, որ ԱՄՆ-ի իշխանությունները խորապես մտահոգված են Վրաստանի կառավարության շարունակվող հակաժողովրդավարական գործողություններով, որոնք անհամատեղելի են ԵՄ-ին և ՆԱՏՕ-ին անդամակցելու նորմերին: *«Ի հավելումն, այսպես կոչված, օտարերկրյա ազդեցության մասին օրենքի ընդունմանը, մենք տեսել ենք, որ վրացական կառավարությունը բազմիցս դաժանաբար է վերաբերվում Վրաստանի այն քաղաքացիներին, ովքեր բողոքում էին այս օրենքի դեմ»,* – ասել է նա[30]:

Սեպտեմբերի 17-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն ԱՄՆ-ի դեսպան Ռոբին Դաննիգանի հետ հանդիպմանը մտահոգություն է հայտնել ԱՄՆ-ի պետքարտուղարության նախօրեի որոշման առնչությամբ, ըստ որի՝ պատժամիջոցներ և վիզային սահմանափակումներ են կիրառվելու Վրաստանի քաղաքացիների, այդ թվում՝ ոստիկանների նկատմամբ: Վարչապետը նշել է, որ *«այս որոշմամբ ամերիկյան կողմը մոտեցել է կրիտիկական սահմանի, որը նմանատիպ մեկ այլ որոշման կայացման դեպքում կարող է հանգեցնել վրաց-ամերիկյան հարաբերությունների նկատմամբ Վրաստանի դիրքորոշման որակական վերանայման»*[31]: Ի պատասխան Ի. Կոբախիձեի՝ ԱՄՆ-ին ուղղված մեղադրանքների, ըստ որոնց՝ *«մեղավորը Պետքարտուղարությունը չէ, այլ՝ օլիգարխիկ ուժերը, որոնք ունեն հիմնարար ազդեցություն Միացյալ Նահանգների պաշտոնական հաստատությունների վրա»*, Մ. Միլլերը հայտարարել է, որ *«ԱՄՆ-ում, ի տարբերություն աշխարհի որոշ երկրների, ժողովրդավարական ճանապարհով ընտրված կառավարությունն է, որ ընտրություն է կատարում մեր քաղաքականության օգտին և ուրիշ ոչ ոք»*[32]: Մեկ օր անց՝

---

[29] U.S. Department of State, Promoting Accountability for Serious Human Rights Abuse and Anti-Democratic Actions in Georgia, Press Statement, Antony J. Blinken, Secretary of State. September 16, 2024, https://www.state.gov/promoting-accountability-for-serious-human-rights-abuse-and-anti-democratic-actions-in-georgia/ (բեռնման օրը՝ 06.12.2024). Ըստ «Ֆորմուլա» հեռուստաալիքի աղբյուրների՝ ավելի քան 60 անձանց թվում, որոնց նկատմամբ կիրառվել են ԱՄՆ-ի պատժամիջոցները, կան իշխող «Վրացական երազանքի» չորս առաջնորդներ, այդ թվում՝ կուսակցության գլխավոր քարտուղար, Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, կուսակցության գործադիր քարտուղար Մամուկա Մդինարաձեն, պատգամավորներ Անրին Օխանաշվիլին և Դմիտրի Սամխարաձեն:

[30] U.S. Department of State, Department Press Briefing—September 16, 2024, Matthew Miller, Department Spokesperson. September 16, 2024, https://www.state.gov/briefings/department-press-briefing-september-16-2024/#post-585229-GEORGIA2 (բեռնման օրը՝ 20.11.2024).

[31] საქართველოს მთავრობა, საქართველოს პრემიერ-მინისტრი ამერიკის შეერთებული შტატების ელჩს შეხვდა. 17.09.2024. https://www.gov.ge/index.php?lang_id=GEO&sec_id=596&info_id=89656 (բեռնման օրը՝ 06.12.2024).

[32] U.S. Department of State, Department Press Briefing—September 17, 2024, Matthew Miller, Department Spokesperson. Washington, D.C., September 17, 2024, https://www.state.gov/briefings/department-press-briefing-september-17-2024/ (բեռնման օրը՝ 20.11.2024).

սեպտեմբերի 18-ին, Ի. Կոբախիձեն հայտարարեց, որ ԱՄՆ-ի կիրառած պատժամիջոցները չեն նպաստում հարաբերությունների վերականգնմանը, ավելին, նպատակաուղղված են վրաց-ամերիկյան հարաբերությունների ոչնչացմանը: Վարչապետը *«չափազանց միրավորական»* է անվանել պատժամիջոցների կիրառումը հատկապես 2008 թ. օգոստոսյան պատերազմին մասնակցած բարձրաստիճան ոստիկանների նկատմամբ[33]: Վրաստանի խորհրդարանի նախագահ Շ. Պապուաշվիլին էլ Վրաստանի քաղաքացիների դեմ ԱՄՆ-ի պատժամիջոցների կիրառման որոշման հայտարարման համար ընտրված ժամանակը կապել է երկրում կայանալիք խորհրդարանական ընտրությունների և ընդդիմությանը հրելու ցանկության հետ, քանի որ, ըստ խորհրդարանի ղեկավարի, նրանք տեսնում են, թե ինչպիսի բացարձակապես անարժեք ու խայտառակ ընդդիմություն է գործում Վրաստանում[34]: Նա նաև հայտարարել է, որ Վրաստանի և ԱՄՆ-ի հարաբերությունների վերականգնումը տեղի կունենա միայն այն դեպքում, եթե դադարեցվեն կեղծ մեղադրանքները Վրաստանի և վրաց ժողովրդի հասցեին[35]:

### ԵՄ–Վրաստան հարաբերություններում որոշում նոր պատժամիջոցների մասին

Հոկտեմբերի 4-ին Վրաստանում Եվրամիության դեսպան Պավել Հերչինսկին հայտարարեց, որ Եվրամիության կառույցները որոշել են դադարեցնել բարձր մակարդակի բոլոր հանդիպումները վրացական իշխանությունների ներկայացուցիչների հետ: Հիշեցնելով Եվրոպական խորհրդում հունիսի 27-ին *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքի հայտնի քննարկումն ու համապատասխան որոշումները՝ դեսպանը հայտնել է, որ Եվրամիությունը որոշում է կայացրել բարձր մակարդակի այցեր չկատարել Վրաստան և բարձր մակարդակով հանդիպումներ չունենալ Բրյուսելում վրացական իշխանությունների ներկայացուցիչների հետ՝ Վրաստանի իշխանությունների հակաարևմտյան և հակաեվրոպական խոսույթների, հռետորաբանության, քարոզչության պատճառով[36]:

---

[33] Премьер: санкции США направлены на разрушение отношений с Грузией. 18.09.2024, https://sputnik-georgia.ru/20240918/premer-sanktsii-ssha-napravleny-na-razrushenie-otnosheniy-s-gruziey-289955669.html (բեռնման օրը՝ 06.12.2024).

[34] Санкции США связаны с выборами в Грузии – глава парламента. 19.09.2024, https://sputnik-georgia.ru/20240919/ sanktsii-ssha-svyazany-s-vyborami-v-gruzii--glava-parlamenta-289961581.html (բեռնման օրը՝ 06.12.2024).

[35] Спикер парламента Грузии назвал условия перезагрузки отношений с США. 19.09.2024, https://sputnik-georgia.ru/20240919/spiker-parlamenta-gruzii-nazval-usloviya-perezagruzki-otnosheniy-s-ssha--289964175.html (բեռնման օրը՝ 06.12.2024).

[36] პაველ ჰერჩინსკი - ევროკავშირის ინსტიტუტებმა გადაწყვიტეთ, რომ შეგვეჩერებინა ყველა მაღალი დონის შეხვედრა საქართველოს ხელისუფლების წარმომადგენლებთან. 04.10.2024, https://www.inter

Հոկտեմբերի 8-ին Վրաստանում ԵՄ պատվիրակությունը պարզաբանում տարածեց, որ Վրաստանին տարեկան հատկացվող գումարներն ամբողջությամբ չեն ծախսվում, ուստի այն, ինչ մնացել էր 2022 և 2023 թթ.-ից, կկորչի: Պատճառը, ըստ ԵՄ-ի, *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքի ընդունումից հետո ժողովրդավարության հետընթացն է: Պահված և վերաբաշխված միջոցներն ըստ տարիների բաշխվել են հետևյալ կերպ՝ 2022 թ.-ին՝ €12 մլն, 2023 թ.-ին՝ €72 մլն, 2024 թ.-ին՝ €37,3 մլն, 3 տարվա ընթացքում՝ ընդհանուր առմամբ €121,3 մլն, ինչը և սառեցվել է[37]: Վրաստանում ԵՄ պատվիրակության հաղորդագրությունը քաղաքական կողմնակալ հայտարարություն անվանեց խորհրդարանի առաջին փոխխոսնակ, իշխող «Վրացական երազանքի» առաջնորդներից Գեորգի Վոլսկին[38]: Հոկտեմբերի 8-ին, Եվրախորհրդարանը 495 կողմ և 73 դեմ ձայների հարաբերակցությամբ ընդունեց *«Վերադարձ ժողովրդավարությունից և Վրաստանում քաղաքական բազմակարծության սպառնալիքները»* բանաձևը, որը պարունակում էր վրացական իշխանություններին ներկայացված պահանջների երկար ցուցակ: Նրանում խոսվում էր Վրաստանի կողմից ՌԴ դեմ պատժամիջոցներ սահմանելու, նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլիի ազատ արձակման, *«օտարերկրյա գործակալների»* և ԼԳԲՏ քարոզչության դեմ օրենքները չեղարկելու անհրաժեշտության մասին: Բանաձևում նաև կոչ էր արվում ԵՄ-ին՝ սառեցնել Վրաստանի կառավարության ամբողջ ֆինանսավորումը, պատժամիջոցներ կիրառել «Վրացական երազանքի» հիմնադիր Բ. Իվանիշվիլիի և *«ժողովրդավարությունը խարխլելու»* բոլոր պատասխանատուների դեմ[39]: Ըստ բանաձևի, Վրաստանում աճում է Ստալինի պաշտամունքը և կարոտախտը խորհրդային շրջանի նկատմամբ: Վրաստանի իշխանությունները, ըստ եվրոպացի պատգամավորների, սատարում են դրան, ինչը ընդգծում է նրանց *«ավելի սերտ կապը Ռուսաստանի հետ»*: Նշվում է, որ մայիսի 28-ին խորհրդարանը, ի հեճուկս Վրաստանի եվրոպացի գործընկերների կոչերի և երկրում զանգվածային բողոքի ցույցերի, ընդունել է

pressnews.ge/ka/article/814858-pavel-herchinski-evrokavshiris-institutebma-gadavcqvitet-rom-shegvecherebina-qvela-magali-donis-shexvedra-sakartvelos-xelisuplebis-carmomadgenlebtan (բեռնման օրը՝ 06.12.2024).

[37] Georgia to Lose 121 Million Euros in EU Aid Over Democratic Backsliding. 08.10.2024, https://civil.ge/archives/627707 (բեռնման օրը՝ 06.12.2024).

[38] ЕС лишит Грузию 121 млн евро – реакция представителя "Грузинской мечты". 08.10.2024. https://sputnik-georgia.ru/20241008/es-lishit-gruziyu-121-mln-evro---reaktsiya-predstavitelya-gruzinskoy-mechty-290254632.html (բեռնման օրը՝ 06.12.2024).

[39] European Parliament, JOINT MOTION FOR A RESOLUTION on the democratic backsliding and threats to political pluralism in Georgia. 08.10.2024, https://www.europarl.europa.eu/doceo/document/RC-10-2024-0070_EN.html (բեռնման օրը՝ 07.12.2024). Սա Եվրախորհրդարանի չորրորդ կոշտ բանաձևն է Վրաստանի վերաբերյալ ուկրաինական հակամարտության սկզբից ի վեր: Առաջին բանաձևն ընդունվել է 2022 թվականի հունիսի 9-ին, երկրորդը՝ 2022 թվականի դեկտեմբերի 14-ին, իսկ երրորդը՝ 2024 թվականի ապրիլի 25-ին: Բացի այդ, 2023 թվականի փետրվարի 15-ին Եվրախորհրդարանը Սաակաշվիլիին սատարող բանաձև է ընդունել:

*«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքը՝ հաղթահարելով նախագահ Ս. Զուրաբիշվիլիի վետոն: Այս օրենքը, ըստ եվրոպացի պատգամավորների, մշակվել է *«Ռուսաստանում օտարերկրյա գործակալների մասին օրենսդրության մոդելի հիման վրա»* և իր ոգով ու բովանդակությամբ հակասում է ԵՄ նորմերին և արժեքներին: Նշվում է, որ, այսպես կոչված, *«Օտարերկրյա գործակալների մասին»* օրենքի ընդունումը փաստացի սառեցրեց Վրաստանի անդամակցության գործընթացը և հանգեցրեց Վրաստանին ԵՄ ֆինանսական օգնության դադարեցմանը: Վրաստանի իշխանությունների արձագանքը նույնն էր. իշխող «Վրացական երազանք» կուսակցության գլխավոր քարտուղար, Թբիլիսիի քաղաքապետ Կ. Կալաձեն հայտարարեց, որ բանաձևը *«գրոշի արժեք չունի»*: Ռուսաստանի դեմ պատժամիջոցներ սահմանելու կոչի վերաբերյալ Կ. Կալաձեն ասել է. *«Մենք գիտենք, թե ինչ է պատերազմը, ինչքան անախորժություն է այն բերում: Մենք գիտենք, թե ինչի՞ կարող են հանգեցնել պատժամիջոցները: Եթե մենք լինեինք թույլ կառավարություն, վախենայինք ոմանցից և միանայինք պատժամիջոցներին, կտուժեր գյուղացին, որը չարչարվում է»*[40]*:* «Վրացական երազանք» կուսակցության գործադիր քարտուղար, պատգամավոր Մ. Մդինարաձեն էլ հայտարարեց, որ եվրախորհրդարանի կողմից Վրաստանի վերաբերյալ ընդունված վերջին կոշտ բանաձևը *«ոչ միայն միջամտություն է երկրի գործերին և պատերազմի կոչ»*, այլև առաջիկա խորհրդարանական ընտրությունների վրա ազդելու փորձ՝ հօգուտ ամենամեծ ընդդիմադիր կուսակցության՝ «Միացյալ ազգային շարժման»[41]:

Հոկտեմբերի 11-ին Վրաստանը ստացավ հերթական կոշտ ուղերձը եվրոպայից. Գերմանիայի Բունդեսթագի կողմից ընդունվեց *«Վրաստանի եվրոպական ապագայի համար»* բանաձևը, որտեղ բազմաթիվ կոշտ ձևակերպումների հետ միասին նշված էր, որ *«…այսպես կոչված «արտաքին ազդեցության թափանցիկության» մասին օրենքի ուժի մեջ մտնելու դեպքում ԵՄ անդամակցության գործընթացում հետագա առաջընթաց չի կարող լինել և չի լինի»:* Գերմանիայի իշխող կուսակցությունների կողմից ընդունված փաստաթղթով պատգամավորները նաև կոչ են անում չեղարկել սեռական փոքրամասնությունների իրավունքները սահմանափակող օրենքները և անհրաժեշտ են համարում դա պայման դնել ԵՄ-ին Վրաստանի ինտեգրման գործընթացում հետագա առաջընթացի համար[42]:

---

[40] Резолюция Европарламента и гроша ломаного не стоит – Каладзе. 09.10.2024, https://sputnik-georgia.ru/20241009/rezolyutsiya-evroparlamenta-i-grosha-lomanogo-ne-stoit---kaladze-290296584.html (բեռնման օրը՝ 07.12.2024).

[41] Депутат: Резолюция Европарламента – вмешательство в дела Грузии и призыв к войне. 10.10.2024, https://sputnik-georgia.ru/20241010/deputat-rezolyutsiya-evroparlamenta--vmeshatelstvo-v-dela-gruzii-i-prizyv-k-voyne-290303165.html (բեռնման օրը՝ 07.12.2024).

[42] Deutscher Bundestag, Dokumente, Motion: A European future for Georgia, tabled by the SPD, Alliance 90/The Greens and FDP parliamentary groups. Berlin. https://www.bundestag.de/dokumente/textarchiv/2024/kw41-de-

Վրաստանի խորհրդարանի նախագահ Շ. Պապուաշվիլին կոշտ կերպով քննադատել է Գերմանիայի Բունդեսթագի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Միխայել Ռոթին՝ նշելով, որ *«գերմանական քաղաքականության և դիվանագիտության մեջ կան մարդիկ, ովքեր կարճաժամկետ նպատակների պատճառով խաթարում են Վրաստանի և Գերմանիայի առանձնահատուկ բարեկամությունը»*[43]*:*

Վրաստանի խորհրդարանական ընտրությունների նախօրեին Արևմուտքի՝ նման գրոհի օրերին վարչապետ Ի. Կոբախիձեն վերստին անդրադարձավ *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքին, որի պատճառով Եվրամիությունը կասեցրել է երկրի եվրաինտեգրումը, անվանելով այն *«հեղափոխության թափանցիկության մասին օրենք»: «Մենք ասում ենք բոլորին, ներառյալ օտարերկրյա կոնկրետ սուբյեկտներին, խնդրեմ, կարող եք փորձել հեղափոխություն կազմակերպել Վրաստանում, բնականաբար, այդ փորձերը անհաջող են լինելու, բայց եթե ցանկանում եք հեղափոխություն կազմակերպել Վրաստանում, խնդրում ենք դա անել թափանցիկ»,* – ասել է Ի. Կոբախիձեն, ով Վրաստանում և դրա սահմաններից դուրս հակառակորդների կողմից նոր օրենքն իբրև *«ռուսական օրենք»* հռչակելն անվանել է *«դարի խարդախություն»*[44]:

**Վրաստան–Մոլդովա. ըստ Վրաստանի իշխանությունների՝ անարդար համեմատություն**

Վրաստանում և Մոլդովայում կայանալիք, համապատասխանաբար, խորհրդարանական և նախագահական ընտրություններից առաջ՝ 2024 թ. հոկտեմբերի 14-ին, Լյուքսեմբուրգում տեղի ունեցած Արտաքին հարաբերությունների խորհրդի հանդիպմանը, ի թիվս այլ հարցերի, ԵՄ արտգործնախարարները քննարկել են նաև իրավիճակը Վրաստանում և Մոլդովայում: Ելույթ ունենալով ԵՄ ԱԳ նախարարների հանդիպումից հետո կայացած մամուլի ասուլիսում՝ ԵՄ արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության բարձր ներկայացուցիչ և Եվրոպական հանձնաժողովի փոխնախագահ Ժոզեպ Բորելը, ով նաև նախագահում էր Խորհրդի նիստը, հայտարարեց, որ Բրյուսելը գնահատում է Մոլդովայի կառավարության տոկունությունն այս *«աննախադեպ մարտահրավերներին»* դիմակայելու հարցում՝ հավելելով, որ ԵՄ-ն

---

georgien-antrag-en-1023276? (բեռնման օրը՝ 06.12.2024).

[43] Попытка подорвать дружбу – глава парламента Грузии осудил резолюцию Бундестага Германии. 11.10.2024, https://sputnik-georgia.ru/20241011/popytka-podorvat-druzhbu---glava-parlamenta-gruzii-osudil-rezolyutsiyu-bundestaga-germanii-290314800.html (բեռնման օրը՝ 07.12.2024).

[44] Премьер Грузии назвал забракованный Западом закон "законом о прозрачности революции". 11.10.2024, https://sputnik-georgia.ru/20241011/premer-gruzii-nazval-zabrakovannyy-zapadom-zakon-zakonom-o-prozrachnosti-revolyutsii-290323520.html (բեռնման օրը՝ 07.12.2024).

կպահպանի իր աջակցությունը: Ի հակադրություն, Վրաստանում իրավիճակը «ավելի գորշ պատկեր ունի»: *«Իշխող կուսակցության վերջին գործողությունները, նրա հայտարարությունները և ընտրական խոստումները երկիրը հեռացնում են եվրոպական ուղուց և ազդանշան են տալիս դեպի ավտորիտարիզմ: Այդ իսկ պատճառով ԵՄ-ին անդամակցելու գործընթացը դե ֆակտո դադարեցված է»*, – ասել է Ժ. Բորելը[45]: Իշխող «Վրացական երազանք» կուսակցության պատգամավոր Իրակլի Կիրցխալիայի կարծիքով՝ Ժ. Բորելը առաջնորդվում է *«երկակի ստանդարտներով»*, իսկ նրա հայտարարությունը Վրաստանում նախընտրական իրավիճակի մասին *«չափազանց անարդար է»* և կտրված է ցանկացած իրականությունից: Պատգամավորի խոսքով՝ Ժ. Բորելի հայտարարությունը ուղղակիորեն վիրավորում է Վրաստանի վերաբերյալ հրապարակված բոլոր զեկույցներն ու ուսումնասիրությունները[46]: Իր հերթին՝ Վրաստանի կառավարության ղեկավար Ի. Կոբախիձեն, ի պատասխան ԵՄ դիվանագիտության ղեկավարի քննադատությանը, հայտարարեց, որ Վրաստանի համեմատությունը Մոլդովայի հետ բացասական համատեքստում, երբ առկա են գերազանցության ապացույցներ, վիրավորական է: *«…Դուք գիտեք, որ Վրաստանը առաջ է Մոլդովայից բոլոր առումներով՝ լինի դա ժողովրդավարություն, մարդու իրավունքներ, տնտեսություն: …Վրաստանի տնտեսությունն ավելի մեծ է 9 մլրդ դոլարով, և դա, ի թիվս այլ բաների, պայմանավորված է նրանով, որ Վրաստանը, ի տարբերություն Մոլդովայի, ունի շատ ուժեղ պետական ինստիտուտներ: …Ինչ վերաբերում է ժողովրդավարությանը և մարդու իրավունքներին, ապա պետք է հիշել, որ Մոլդովայում քաղաքական կուսակցություններն ու լրատվամիջոցներն արգելվել են, իրականում մնացել է ողջ երկրում հեռարձակվող ընդամենը 2 լրատվամիջոց՝ հանրային հեռարձակողի առաջին և երկրորդ ալիքները»*, – փաստել է Վրաստանի վարչապետը[47]:

### Տասնամյա «Ուորդրոփյան երկխոսության» սառեցումը՝ նախընտրական ազդակ Մեծ Բրիտանիայից

Նախընտրական փուլում հերթական բացասական ազդակը Վրաստանի իշխանություններն ստացան Մեծ Բրիտանիայից. հոկտեմբերի 15-ին Վրաստանում Մեծ

[45] European Commission, Foreign Affairs Council: press conference by Josep Borrell Fontelles, High Representative of the Union for Foreign Affairs and Security Policy and Vice-President of the European Commission. 14.10.2024, https://audiovisual.ec.europa.eu/en/video/I-261883 (բեռնման օրը՝ 09.12.2024).

[46] Заявление Борреля о Грузии оторвано от реальности – депутат. 15.10.2024, https://sputnik-georgia.ru/20241015/otorvano-ot-realnosti--v-gruzii-rezko-otvetili-na-zayavlenie-borrelya-290363263.html (բեռնման օրը՝ 09.12.2024).

[47] Сравнение Грузии с Молдовой оскорбительно – Кобахидзе ответил Боррелю. 15.10.2024, https://sputnik-georgia.ru/20241015/sravnenie-gruzii-s-moldovoy-oskorbitelno---kobakhidze-otvetil-borrelyu-290371947.html (բեռնման օրը՝ 09.12.2024).

Բրիտանիայի դեսպան Գարեթ Ուորդը ծավալուն հարցազրույցում հայտարարեց, որ Մեծ Բրիտանիան որոշել է սառեցնել նախարարների միջև անցկացվող ամենամյա բարձր մակարդակի «Ուորդրոփյան երկխոսությունը» («Wardrop Dialogue»): Երկխոսության այս ձևաչափն անվանվել է Վրաստանում բրիտանացի առաջին դիվանագետներից մեկի՝ Օլիվեր Ուորդրոփի անունով: Այն ընդգրկում է համագործակցության այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են արտաքին քաղաքականությունը, պաշտպանությունը, անվտանգությունը, տնտեսությունը և առևտուրը: Ըստ դեսպանի՝ պատճառը նաև խնդրո առարկա *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքի ընդունումն է: *«Մեծ Բրիտանիայի և Վրաստանի, ինչպես նաև արևմտյան այլ գործընկերների հետ հարաբերությունները վնասվեցին Վրաստանի կառավարության՝ այս տարի ձեռնարկած քայլերից: Մեզ մտահոգում էր, երբ խորհրդարանն ընդունեց քաղաքացիական հասարակության գործունեությունը սահմանափակող օրենք, թեև վերջինս հանրության կողմից մեծ հակազդեցություն տեսավ և պարտավորվեց այս օրենքը նորից չդնել օրակարգ: Մենք հիասթափվեցինք, երբ «Վրացական երազանքի» առաջնորդները սկսեցին դավադրության տեսություններ քարոզել և ենթադրություններ անել, որ արևմտյան գործընկերները խարխլում են Վրաստանը: Մենք ցնցվեցինք, երբ «Վրացական երազանքը» որպես իր նախընտրական ծրագրի խոստում նշեց ընդդիմադիր կուսակցությունների արգելումը: ...Մենք նաև չեղարկեցինք բարձր մակարդակով նախատեսված բանակցությունները պաշտպանության ղեկավարների միջև և կասեցրեցինք կիբերանվտանգության նոր ծրագիրը: Ընտրություններից հետո, անկախ նրանից, թե ով է կառավարությունում, մենք հույս ունենք տեսնել եվրաատլանտյան ուղի վերադարձի հստակ ապացույցներ՝ վստահությունը վերականգնելու և սերտ գործընկերության վերադառնալու համար»,* – հայտարարել էր դեսպանը[48]: Փաստենք, որ 2014 թ. ստեղծված «Ուորդրոփյան երկխոսությունը» սառեցվում էր առաջին անգամ:

### Հայց՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Հոկտեմբերի 17-ին վրացական հեղինակավոր «Վրաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը հայտարարեց, որ 16 լրատվամիջոցների, 120 քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և 4

[48] გაერთიანებული სამეფოს ელჩი გარეტ უორდი - „უცხოური გავლენის გამჭვირვალობის“ შესახებ კანონი არის არაპროპორციული, ახშობს სიტყვის თავისუფლებას და ახდენს მათ სტიგმატიზაციას, ვინც საზოგადოებისთვის სასარგებლო საქმეს აკეთებს. 15.10.2024, https://www.interpressnews.ge/ka/article/816247-gaertianebuli-samepos-elchi-garet-uordi-ucxouri-gavlenis-gamchvirvalobis-shesaxeb-kanoni-aris-araproporciuli-axshobs-sitqvis-tavisuplebas-da-axdens-mat-stigmatizacias-vinc-sazogadoebistvis-sasargeblo-sakmes-aketebs (բեռնման օրը՝ 09.12.2024).

անհատների անունից հայց է ներկայացնում Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ ընդդեմ *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքի (իրենց ձևակերպմամբ՝ *«ընդդեմ ռուսական օրենքի և դրա ծանր հետևանքների»*): Ըստ պաշտոնական հաղորդագրության՝ վրացական ՀԿ-ները սկսում են ռուսական օրենքի դեմ պայքարի նոր փուլ, քանի որ *«ռուսական մեթոդներով անկախ կազմակերպությունների դեմ պայքարը ոչ միայն խախտում է մարդու հիմնարար իրավունքները, այլև խարխլում է վրաց ժողովրդի անսասան ընտրությունը եվրատլանտյան կառույցներին ինտեգրվելու հարցում: Ափսոս, որ սահմանադրական պարտավորությունը, որը պարտավորեցնում է պետական մարմիններին պաշտպանել քաղաքակրթական այս բոլոր ընտրությունները, խախտվում է իշխանության մարմինների կողմից, իսկ Սահմանադրական դատարանը հրաժարվում է կատարել իր պարտականությունը»*[49]: Արձագանքելով նախաձեռնությանը՝ խորհրդարանի ղեկավար Շ. Պապուաշվիլին սոցցանցի իր էջում գրել է հետևյալը. *«Թափանցիկության ռեգիստրում այսօր գրանցված կազմակերպությունների թիվը (144 կազմակերպություն) արդեն գերազանցել է* «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին» *օրենքը վիճարկող կազմակերպությունների թիվը (136 կազմակերպություն»*: Նրա խոսքերով՝ *«…ավելի քան 300 կազմակերպությունների գրանցման դիմումներն ընթացքի մեջ են»*[50]:

**Արևմուտքի գրոհն ընտրությունների նախօրեին.**
**իշխանությունը խլելու հերթական փորձի ձախողումը**

2024 թ.-ի հոկտեմբերի 17-ին Բրյուսելում կայացած գագաթնաժողովից հետո հրապարակված փաստաթղթում Եվրոպական խորհուրդը *«վերահաստատել է իր լուրջ մտահոգությունը Վրաստանի կառավարության ձեռնարկած գործողությունների վերաբերյալ, որոնք հակասում են այն արժեքներին և սկզբունքներին, որոնց վրա հիմնված է Եվրամիությունը: Եվրոպական խորհուրդը հիշեցնում է, որ գործողությունների նման ընթացքը վտանգում է Վրաստանի եվրոպական ուղին և դե ֆակտո դադարեցնում է անդամակցության գործընթացը: Այն կոչ է անում Վրաստանին ընդունել ժողովրդավարական, համապարփակ և կայուն բարեփոխումներ՝ եվրոպական ինտեգրման*

[49] საქართველოს ახალგაზრდა იურისტთა ასოციაცია, სამართლებრივი ბრძოლა რუსული კანონის წინააღმდეგ სტრასბურგში გაგრძელდება. 17.10.2024, https://www.gyla.ge/post/samartlebrivi-brdzola-rusuli-kanonis-cinaagmdeg (բեռնման օրը՝ 09.12.2024).

[50] შალვა პაპუაშვილი - გამჭვირვალობის რეესტრში რეგისტრირებულ ორგანიზაციათა რიცხვმა გადააჭარბა იმ ორგანიზაციებს, რომლებიც კანონს ასაჩივრებენ, 300-ზე მეტი განაცხადი კი დამუშავების პროცესშია. 17.10.2024, https://1tv.ge/news/shalva-papuashvili-gamchvirvalobis-reestrshi-registrirebul-organizaciata-rickhvma-gadaacharba-im-organizaciebs-romlebic-kanons-asachivreben-damatebit-300-ze-meti-ganackhadi-damushavebis-processhia/ (բեռնման օրը՝ 09.12.2024).

*հիմնական սկզբունքներին համապատասխան: Եվրոպական խորհուրդը կշարունակի ուշադիր հետևել իրավիճակին»*[51]: Վրաստանի կառավարության ղեկավար Իրակլի Կոբախիձեն, մեկնաբանելով Եվրոպական խորհրդի նիստի եզրակացությունը, փաստել է, որ Վրաստանում ոչ ժողովրդավարական կառավարման մասին հայտարարությունները Ուկրաինայի և Մոլդովայի գովասանքի ֆոնին, որտեղ մեկը մյուսի հետևից փակվում են հեռուստաալիքներն ու կուսակցությունները, անարդարացի են, պարզապես Մոլդովայի հանդեպ չկա այն հետաքրքրությունը, որը կա Վրաստանի հանդեպ: Ի. Կոբախիձեն ընդգծել է, որ Վրաստանի հասցեին քննադատությունը լիովին անհիմն է, և դա բոլորին է հայտնի, և որ Վրաստանում խորհրդարանական ընտրություններից ու ուկրաինական կոնֆլիկտի ավարտից հետո կփոխվեն Վրաստանի հանդեպ հետաքրքրությունները, և կվերականգնվեն հարաբերություններն ինչպես Եվրամիության, այնպես էլ ԱՄՆ-ի հետ (*«հարաբերությունները կփոխվեն, և արդարությունը կվերականգնվի»*): *«Մեր ուղերձն այն է, որ Վրաստանը շարունակում է առաջ գնալ այս ճանապարհով, որպեսզի մինչև 2030 թ. դառնա Եվրամիության անդամ: Այսինքն՝ զարգանալ շատ ավելի արագ, քան Ուկրաինան և Մոլդովան, ինչպես եղավ նախորդ տարիներին»*, – ասել է Ի. Կոբախիձեն[52]: Մեկ օր անց՝ հոկտեմբերի 18-ին, Վրաստանում ԵՄ դեսպան Պավել Հերչինսկին հանդես եկավ ավելի շատ շանտաժ հիշեցնող ճեպազրույցով՝ հիշեցնելով, որ, ի պատասխան Վրաստանի *«նպապակային գործողությունների, որոշումների, օրենսդրության»*, հունիսին Եվրամիության 27 երկրների ղեկավարներ որոշել են կասեցնել Վրաստանի եվրաինտեգրման գործընթացը: Նրա խոսքով՝ Վրաստանն արդեն կորցրել է $121 մլն եվրոպական օգնությունից, սակայն դա վերաբերում է միայն կառավարության աջակցության ներկայիս ծրագրերին: *«Եվրամիությունը շատ հստակ ասել է, որ վրացական իշխանությունների բարձրաստիճան ներկայացուցիչների որոշումներն ու գործողությունները հասցրել են իրավիճակը այն աստիճանի, որ Վրաստանի և Եվրամիության հարաբերությունները հասել են այնքան ցածր կետի: Եթե վրացական իշխանության հետագիծը չփոխվի, Վրաստանն էլ ավելի շատ կկորցնի: Եթե դուք՝ վրացիներդ, ձեր ձայներով որոշեք չշարունակել շարժվել դեպի Եվրամիություն, ապա Վրաստանը կկորցնի ամբողջ ֆինանսական օգնությունը, որն ուղարկվում է մինչև անդամակցելը, իսկ*

---

[51] European Council, Brussels, 17 October 2024 (OR. en) EUCO 25/24 CO EUR 20 CONCL 5. https://www.consilium.europa.eu/media/2pebccz2/20241017-euco-conclusions-en.pdf?fbclid=IwY2xjawF-V9JleHRuA2FlbQIxMQABHZBfhj6DRobFK_iRgZn03ICUe-E-fcQd5Wq4IJSNfpE1Ngq1WrUG6o2iuw_aem_rWzOcR3Li_Rd_clcG6zorA (բեռնման օրը՝ 09.12.2024).

[52] Премьер Грузии назвал несправедливыми все обвинения Евросоюза. 18.10.2024, https://sputnik-georgia.ru/20241018/premer-gruzii-nazval-nespravedlivymi-vse-obvineniya-evrosoyuza-290420546.html (բեռնման օրը՝ 09.12.2024).

*Վրաստանը կկորցնի այն բոլոր գումարները, որոնք ստանում են ԵՄ նոր անդամ երկրները, նրանք, որոնք ունեն ցածր տնտեսական զարգացում»,* – ասել է Պ. Հերչինսկին[53]: Վարչապետ Ի. Կոբախիձեն այս հայտարարությունը ոչ օբյեկտիվ է համարել՝ նշելով, որ մեկ կուսակցության կողմից խորհրդարանական մեծամասնություն ստանալը չի նշանակում միակուսակցական իշխանություն. դա ժողովրդի ընտրությունն է, որը պետք է հարգեն բոլորը: Նրա խոսքով՝ 2020 թ. խորհրդարանական ընտրություններում «Վրացական երազանքը» ձայներ է ստացել յուրաքանչյուր երկրորդ ընտրողից: Սա նշանակում էր, որ ժողովրդի կամքն էր, որ «Վրացական երազանքը» կառավարեր երկիրը՝ առանց նախկին իշխող «Միացյալ ազգային շարժում» կուսակցության կամ նրա մասնաճյուղերից որևէ մեկի մասնակցության[54]:

Արևմուտքի՝ կարկուտի տարափի նմանվող ազդակները, ուղերձներն ու հայտարարությունները, որոնք մինչ Վրաստանի խորհրդարանական ընտրությունները փոխակերպվել էին նախազգուշացումների, սպառնալիքների ու շանտաժների, Վրաստանի իշխանությունների համար արդեն սովորական էին, իսկ այդ հարձակումներին ամենօրյա արձագանքը դարձել էր Վրաստանի իշխանությունների նախընտրական բառապաշարի անբաժան մասը: Հերթականը Եվրամիության 13 անդամ երկրների եվրոպական հարցերով նախարարությունների՝ հոկտեմբերի 21-ին տարածված համատեղ հայտարարությունն էր Վրաստանի հարցի վերաբերյալ, ըստ որի՝ Վրաստանը չի կարողանա դառնալ ԵՄ անդամ, եթե կառավարությունը չփոխի իր կուրսը: *«Անցած ամիսների ընթացքում Վրաստանն ընդունել է մի քանի օրենքներ, որոնք չեն համապատասխանում Եվրամիության ընդհանուր նորմատիվային դաշտին (acquis communautaire), մասնավորապես՝* «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին» *օրենքը: Այս որոշումների պատճառով կասեցվել է ձեր երկրի՝ Եվրամիությանը ինտեգրվելու գործընթացը: Այն կկասեցվի այնքան ժամանակ, քանի դեռ ներկայիս քաղաքական կուրսը շարունակվում է: ...Այսպես կոչված* «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին օրենքը» *ո՛չ բովանդակությամբ, ո՛չ ոգով չի համապատասխանում Եվրամիության հիմնական նորմերին և արժեքներին: Դա խարխլում է Վրաստանի քաղաքացիների հիմնարար իրավունքները, որոնք այն պարտավորությունների հիմքն են, որոնք Վրաստանը վերցրեց Եվրամիությանն անդամակցելու ճանապարհին:*

---

[53] "Это не угроза, а реальность" – посол ЕС сделал предупреждение Грузии. 18.10.2024, https://sputnik-georgia.ru/20241018/eto-ne-ugroza-a-realnost---posol-es-sdelal-preduprezhdenie-gruzii-290418949.html (բեռնման օրը՝ 09.12.2024).

[54] Премьер Грузии назвал несправедливыми все обвинения Евросоюза. 18.10.2024, https://sputnik-georgia.ru/20241018/premer-gruzii-nazval-nespravedlivymi-vse-obvineniya-evrosoyuza-290420546.html (բեռնման օրը՝ 09.12.2024).

*Վրաստանի խորհրդարանը հապճեպ ընդունեց այս օրենքը՝ չնայած շաբաթներ շարունակվող հասարակական բողոքներին, նախագահի վետոյին և Վրաստանի գործընկերների միանշանակ քննադատությանը: Ցավոք, վերջին ամիսներին ուժի մեջ մտած Եվրամիությանը և Եվրոպայի խորհրդին ոչ համապատասխան օրենքները, հատկապես՝ ԼԳԲՏՔԻ անձանց իրավունքները սահմանափակող օրենսդրական փաթեթը, Վրաստանին ավելի են հեռացնում ԵՄ ուղուց»,* – նշված էր ԵՄ 13 երկրների պատկան գերատեսչությունների ներկայացուցիչների ստորագրած հայտարարության մեջ[55]: Վրաստանի խորհրդարանի նախագահ Շ. Պապուաշվիլին ԵՄ 13 երկրների եվրոպական հարցերով նախարարների համատեղ հայտարարությունն անվանել է *«միջամտություն գալիք խորհրդարանական ընտրություններին»* և շնորհակալություն է հայտնել ԵՄ մյուս 14 երկրներին այս տեքստին չաջակցելու համար: Խորհրդարանի ղեկավարը մեկնաբանել է նաև հայտարարության ևս մեկ հատված. Եվրոպական խորհրդի 2024 թ. հունիսի 27-ի որոշման մեկնաբանությունն առ այն, որ *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքի պատճառով դե ֆակտո դադարեցվել է ԵՄ-ին Վրաստանի ինտեգրման գործընթացը, ըստ Շ. Պապուաշվիլիի կա՛մ անհեթեթություն է, կա՛մ՝ սուտ: Նա ընդգծել է, որ Վրաստանն այժմ անցնում է զարգացման շատ կարևոր փուլ: *«Վրացական քաղաքականության մեջ աստիճանաբար, ցավալիորեն, բայց այնուամենայնիվ, հաստատվում է նման անհրաժեշտ սկզբունք, ինչպիսին պատասխանատվությունն է: Պատասխանատվություն իր խոսքերի, գործողությունների, ժողովրդին և երկրին ուղղված կոչերի համար»,* – հայտարարել է Շ. Պապուաշվիլին[56]: Ըստ «Վրացական երազանք» կուսակցության հիմնադիր Բիձինա Իվանիշվիլիի՝ Վրաստանի դեմ արևմտյան պատժամիջոցները շանտաժ էին՝ հիմնված կողմնակալ տեղեկատվության վրա, որը միայն հակառակ արդյունքն ունեցավ և չաշխատեց: Այդ հայտարարությունները, ինչպես նշել է Իվանիշվիլին, ըստ էության շանտաժ են, իսկ համակարգումը, ըստ նրա, իրականացվում է *«գլոբալ պատերազմի կուսակցության»* կողմից, որին պատկանում է ներկայիս

---

[55] Հայտարարությունն ստորագրել էին Գերմանիայի, Ֆրանսիայի, Լեհաստանի, Բելգիայի, Դանիայի, Էստոնիայի, Լատվիայի, Լիտվայի, Լյուքսեմբուրգի, Պորտուգալիայի, Ֆինլանդիայի, Շվեդիայի և Չեխիայի արտաքին-եվրոպական ոլորտը համակարգող գերատեսչությունների ղեկավարները և ներկայացուցիչները՝ նախարարներ, փոխնախարարներ ևն [տե՛ս სააგენტო „ინტერპრესნიუსის“ ცნობით, ევროკავშირის წევრი 13 ქვეყნის ევროპის საკითხთა მინისტრები ერთობლივ განცხადებას ავრცელებენ. 21.10.2024, https://1tv.ge/news/evrokavshiris-wevri-13-qveynis-evropis-sakitkhta-ministrebi-ertobliv-ganckhadebas-avrceleben/ (բեռնման օրը՝ 09.12.2024)].

[56] Папуашвили: заявление министров 13 стран ЕС по Грузии – это вмешательство в выборы. 21.10.2024, https://sputnik-georgia.ru/20241021/papuashvili-zayavlenie-ministrov-13-stran-es-po-gruzii---eto-vmeshatelstvo-v-vybory-290462208.html (բեռնման օրը՝ 09.12.2024).

ընդդիմությունը[57]: Վարչապետ Ի. Կոբախիձեն էլ ընտրությունների նախօրեին (հոկտեմբերի 24-ին) կառավարության նիստում հայտարարեց, որ իրենց *«հավակնոտ նպատակն է մինչև 2030 թվականը դառնալ ԵՄ լիիրավ անդամ, և դրա համար կապտրաստվեն բոլոր պայմանները: Վրաստանը մինչև 2030 թ. առավելագույնս պատրաստ կլինի ԵՄ-ին ինտեգրվելու համար»*[58]:

**Եզրակացություններ**

- *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրինագծի վերաշրջանառումը Վրաստանի իշխանությունների կողմից ընկալվում է իբրև սկզբունքային հիմնաքար՝ ինքնիշխանության վերականգնման և Արևմուտքից կախվածության թոթափման ճանապարհին:
- Օրինագծի ընդունումը ուղիղ հարված դարձավ Արևմուտքի և վերջինիցս սնվող վրացական հասարակական, ոչ կառավարական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների համար: Մ. Սաակաշվիլիի կառավարման շրջանից առավել ակտիվ ազդեցության գոտիներ ստեղծած արևմտյան կազմակերպություններն ու լրատվամիջոցները «պատերազմ հայտարարեցին» նախաձեռնության դեմ՝ բացահայտելով շատ իրողություններ:
- Օրենքի ընդունումը դարձավ յուրօրինակ լյուստրացիա, որի միջոցով Վրաստանի իշխանությունները ի ցույց հանեցին Արևմուտքի ստեղծած, ա. կ. *«ՀԿ-պետության»* մոդելը՝ բացահայտելով օտարերկրյա աղբյուրներից սնվող և պետությունից գաղտնի, իսկ հաճախ՝ պետության, Վրաց Ուղղափառ եկեղեցու և վրաց ժողովրդի դավանած արժեքների դեմ գործող ուժերին, կազմակերպություններին և լրատվամիջոցներին:
- Օրենքի ընդունման հետ կապված քննարկումներում Վրաստանի իշխանությունները ցույց տվեցին, որ բազմաթիվ ՀԿ-ներ ու այլ կազմակերպություններ իրականում զբաղվում են ոչ թե իրենց իսկ կանոնադրություններում կամ ծրագրերում սահմանված գործառույթներով, այլ ուղղակի ներգրավված են քաղաքական գործընթացներում՝ ակտիվորեն աջակցելով Արևմուտքի կողմից հովանավորվող ընդդիմադիր ուժերին ու շարժումներին:

---

57 Санкции в отношении Грузии имели обратный результат – Иванишвили. 22.10.2024, https://sputnik-georgia.ru/20241018/premer-gruzii-nazval-nespravedlivymi-vse-obvineniya-evrosoyuza-290420546.html (բեռնման օրը՝ 09.12.2024).

58 ირაკლი კობახიძე - ჩვენი ამბიციური მიზანია, 2030 წლისთვის ქვეყანა გახდეს ევროკავშირის სრულფასოვანი წევრი და ამისთვის ყველა პირობა იქნება მომზადებული. 24.10.2024, https://1tv.ge/news/irakli-kobakhidze-chveni-ambiciuri-mizania-2030-wlistvis-qveyana-gakhdes-evrokavshiris-srulfasovani-wevri-qveyana-da-amistvis-yvela-piroba-iqneba-momzadebuli/ (բեռնման օրը՝ 09.12.2024).

- Օրենքի ընդունման գործընթացը վերածվեց Արևմուտք–Վրաստանի իշխանություններ հակամարտության, որտեղ կողմերից և ոչ մեկը չզիջեց՝ հասկանալով, որ չնչին նահանջն իսկ կարող է շրջադարձային նշանակություն ունենալ. Արևմուտքը կկորցնի 20-ամյա իր ազդեցության գոտին Այսրկովկասի կարևորագույն խաչմերուկում, իսկ Վրաստանը՝ ինքնիշխանության ու հարաբերականորեն կայուն զարգացման հեռանկարը:

- Ըստ վրացական իշխանությունների՝ օրենքի վերաշրջանառման ընթացքում Արևմուտքը փորձեց հեղաշրջման միջոցով տապալել իր ազդեցության գոտուց դուրս սպրդող Վրաստանի իշխանություններին, ձևավորել վերահսկելի իշխանություն և շուտափույթ կերպով 2-րդ ճակատը բացել ՌԴ-ի դեմ, ինչը, սակայն, չհաջողվեց:

- Հոկտեմբերի 26-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների նախօրեին վերստին ակտիվացնելով օրենքի ընդունման հետ կապված իր խոսույթները՝ Արևմուտքը հերթական գրոհը կազմակերպեց Վրաստանի օրինական իշխանությունների դեմ՝ փորձելով բացառել կամ թուլացնել վերջիններիս վերընտրվելու հնարավորությունները: Արևմուտքի տարբեր երկրների, միջազգային ատյանների և այլ օղակների կողմից այդ նպատակին հասնելու համար Վրաստանի դեմ կիրառվեցին նախազգուշացումներ, պատժամիջոցներ, անգամ՝ սպառնալիքներ և շանտաժներ: Այդուհանդերձ, Վրաստանի իշխանություններին հաջողվեց չեզոքացնել մարտահրավերները ու արժանանալ ընտրության մասնակիցների մեծամասնության վստահությանը:

- Վրաստանի ամենաազդեցիկ ինստիտուտներից մեկը՝ Վրաց Ուղղափառ եկեղեցին, թեև իր ապաքաղաքական բնույթին ու վարքագծին, լուռ, իսկ երբեմն՝ բացահայտ, պաշտպանեց Վրաստանի իշխանությունների օրենսդրական նախաձեռնությունները՝ թե՛ *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»*, թե՛ ԼԳԲՏՔԻ քարոզչությունն արգելող օրենքի դեպքում:

- *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքի ընդունմամբ հունիսի 27-ից փաստացի կասեցվեց Վրաստանի՝ ԵՄ անդամակցության գործընթացը: Չնայած դրան՝ Վրաստանի իշխանությունները մինչև խորհրդարանական ընտրությունների փուլը հայտարարում էին, որ Վրաստանը վստահ գնում է եվրաինտեգրման ուղով, և մինչ 2030 թվականը երկիրը կդառնար ԵՄ լիարժեք անդամ:

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ


1. Ваэ Саркисян, Изнанка скандальных законопроектов: выбор Грузии, “Регион и мир”, научно-аналитический журнал, том XIV, N 2, 2023, сс. 9-19:
2. House Foreign Affairs Committee, A Look at U.S. Policy in Georgia and Moldova Ahead of Their 2024 Elections Subcommittee Hearing. 23.07.2024, https://foreignaffairs.house.gov/hearing/a-look-at-u-s-policy-in-georgia-and-moldova-ahead-of-their-2024-elections/#
3. Атака на грузинское государство – премьер о заявлениях в Конгрессе США. 24.07.2024, https://sputnik-georgia.ru/20240724/ataka-na-gruzinskoe-gosudarstvo--premer-o-zayavleniyakh-v-kongresse-ssha-289152693.html
4. Deputy Head of EU Delegation to Georgia: EU side by side with Georgians who expressed willingness to join EU. 29.07.2024, https://1tv.ge/lang/en/news/deputy-head-of-eu-delegation-to-georgia-eu-side-by-side-with-georgians-who-expressed-willingness-to-join-eu/
5. Регистрация "иноагентов" началась в Грузии. 01.08.2024, https://sputnik-georgia.ru/20240801/registratsiya-inoagentov-nachalas-v-gruzii-289273446.html
6. Брегадзе: Нарушение закона «О прозрачности иностранного влияния» подразумевает для организаций штраф в размере 25 тысяч лари. 30.07.2024, https://www.apsny.ge/2024/pol/1722346569.php
7. U.S. Department of State, United States to Pause Assistance to the Government of Georgia, Press Statement Antony J. Blinken, Secretary of State. 31.07.2024, https://www.state.gov/united-states-to-pause-assistance-to-the-government-of-georgia/
8. Народ Грузии наказывают за укрепление суверенитета – депутат о приостановке помощи США. 01.08.2024, https://sputnik-georgia.ru/20240801/narod-gruzii-nakazyvayut-za-ukreplenie-suvereniteta--deputat-o-priostanovke-pomoschi-ssha-289282206.html
9. La UE reitera que la ley de agentes extranjeros es un retroceso y considera suspender ayudas a Georgia. 02.08.2024, https://www.europapress.es/internacional/noticia-ue-reitera-ley-agentes-extranjeros-retroceso-considera-suspender-ayudas-georgia-20240801171801.html
10. Иски против закона об "иноагентах" в Грузии – суд взвешивает все за и против. 29.08.2024, https://sputnik-georgia.ru/20240829/iski-protiv-zakona-ob-inoagentakh-v-gruzii---sud-vzveshivaet-vse-za-i-protiv-289627139.html
11. Конституционный суд Грузии завершил слушания по делу о законе об "иноагентах". 31.08.2024, https://sputnik-georgia.ru/20240831/konstitutsionnyy-sud-gruzii-zavershil-slushaniya-po-delu-o-zakone-ob-inoagentakh-289674925.html
12. საქართველოს საკონსტიტუციო სასამართლო, საქართველოს პრეზიდენტი, საქართველოს პარლამენტის წევრები: თამარ კორძაია, ანა ნაცვლიშვილი, ლევან ბეჟაშვილი და სხვები (სულ 38 დეპუტატი), ა(ა)იპ „ინფორმაციის თავისუფლების განვითარების ინსტიტუტი“, ა(ა)იპ „უფლებები საქართველო“, ა(ა)იპ „სამოქალაქო საზოგადოების ფონდი“ და სხვები (სულ 122 მოსარჩელე), შპს „საინფორმაციო ცენტრების ქსელი“ და ა(ა)იპ „სტუდია მონიტორი“ საქართველოს პარლამენტის წინააღმდეგ, 9 ოქტომბერი, 2024, https://www.constcourt.ge/ka/judicial-acts?legal=17223
13. Истек срок добровольной регистрации в реестре по закону об "иноагентах" в Грузии. 02.09.2024, https://sputnik-georgia.ru/20240902/istek-srok-dobrovolnoy-registratsii-v-reestre-po-zakonu-ob-inoagentakh-v-gruzii-289697707.html
14. Грязная ложь – лидер "Грузинской мечты" о процессе регистрации "иноагентов". 03.09.2024, https://sputnik-georgia.ru/20240903/gryaznaya-lozh--lider-gruzinskoy-mechty-o-protsesse-registratsii-inoagentov-289702929.html

15. Шалва Папуашвили: Число организаций, зарегистрированных в Реестре прозрачности, превысило количество организаций, оспаривающих закон. 18.10.2024, http://ru.gruzinform.ge/news/63846/Salva-papuaSvili-Cislo-organizacij-zaregistrirovanniK-v-reestre-prozraCnosti-previsilo-koliCestvo-organizacij-osparivaUSiK-zakon.html

16. Премьер Грузии назвал бесперспективным дело против закона об "иноагентов" в суде. 05.09.2024, https://sputnik-georgia.ru/20240905/net-perspektivy-premer-gruzii-ob-iskakh-protiv-zakona-ob-inoagentov-289751069.html

17. U.S. Embassy in Georgia, Senator Shaheen and Congressman Turner's Press conference, August 11, 2024. Tbilisi, https://ge.usembassy.gov/senator-shaheen-and-congressman-turners-press-conference/

18. Sen. Shaheen: GD Wants Georgia to Be a Dictatorship, Not a Democracy. 06.09.2024, https://civil.ge/archives/622795

19. Q+A with Sen. Jeanne Shaheen, The New Hampshire Democrat discusses her recent trip to the Republic of Georgia and her concerns about the nation's anti-democratic trajectory, National Journal, 06.09.2024, https://www.nationaljournal.com/s/726077/qa-with-sen-jeanne-shaheen/?unlock=WQVACHTE5JNQ6FXL

20. Чистая ложь – премьер-министр Грузии ответил сенатору США. 06.09.2024, https://sputnik-georgia.ru/20240906/chistaya-lozh--premer-ministr-gruzii-otvetil-senatoru-ssha-289774995.html

21. Правительство Грузии создает грантовый фонд для НПО – премьер. 09.09.2024, https://sputnik-georgia.ru/20240909/pravitelstvo-gruzii-sozdaet-grantovyy-fond-dlya-npo--premer-289812965.html

22. Foreign Relations Committee, Full Committee Hearing, "Anti-NGO Laws and Other Tools of Democratic Repression". Thursday, September 12th, 2024, https://www.foreign.senate.gov/hearings/anti-ngo-laws-and-other-tools-of-democratic-repression

23. Сенатор Риш прав, негодяям не место в политике Грузии – премьер. 13.09.2024, https://sputnik-georgia.ru/20240913/senator-rish-prav-negodyayam-ne-mesto-v-politike-gruzii--premer-289876926.html

24. Грузия приостановила процесс евроинтеграции? Ответ депутата. 13.09.2024. https://sputnik-georgia.ru/20240913/gruziya-priostanovila-protsess-evrointegratsii-otvet-deputata-289874509.html

25. U.S. Department of the Treasury, Press Releases, Treasury Sanctions Georgian Officials and Extremists for Serious Human Rights Abuse. September 16, 2024, https://home.treasury.gov/news/press-releases/jy2580

26. U.S. Department of State, Promoting Accountability for Serious Human Rights Abuse and Anti-Democratic Actions in Georgia, Press Statement, Antony J. Blinken, Secretary of State. September 16, 2024. https://www.state.gov/promoting-accountability-for-serious-human-rights-abuse-and-anti-democratic-actions-in-georgia/

27. U.S. Department of State, Department Press Briefing—September 16, 2024, Matthew Miller, Department Spokesperson. September 16, 2024. https://www.state.gov/briefings/department-press-briefing-september-16-2024/#post-585229-GEORGIA2

28. საქართველოს მთავრობა, საქართველოს პრემიერ-მინისტრი ამერიკის შეერთებული შტატების ელჩს შეხვდა. 17.09.2024. https://www.gov.ge/index.php?lang_id=GEO&sec_id=596&info_id=89656

29. U.S. Department of State, Department Press Briefing—September 17, 2024, Matthew Miller, Department Spokesperson. Washington, D.C., September 17, 2024, https://www.state.gov/briefings/department-press-briefing-september-17-2024/

30. Премьер: санкции США направлены на разрушение отношений с Грузией. 18.09.2024, https://sputnik-georgia.ru/20240918/premer-sanktsii-ssha-napravleny-na-razrushenie-otnosheniy-s-gruziey-289955669.html

31. Санкции США связаны с выборами в Грузии – глава парламента. 19.09.2024, https://sputnik-georgia.ru/20240919/sanktsii-ssha-svyazany-s-vyborami-v-gruzii--glava-parlamenta-289961581.html

32. Спикер парламента Грузии назвал условия перезагрузки отношений с США. 19.09.2024, https://sputnik-georgia.ru/20240919/spiker-parlamenta-gruzii-nazval-usloviya-perezagruzki-otnosheniy-s-ssha--289964175.html

33. პაველ ჰერჩინსკი - ევროკავშირის ინსტიტუტებმა გადავწყვიტეთ, რომ შეგვეჩერებინა ყველა მაღალი დონის შეხვედრა საქართველოს ხელისუფლების წარმომადგენლებთან. 04.10.2024, https://www.interpressnews.ge/ka/article/814858-pavel-herchinski-evrokavshiris-institutebma-gadavcqvitet-rom-shegvecherebina-qvela-magali-donis-shexvedra-sakartvelos-xelisuplebis-carmomadgenlebtan

34. Georgia to Lose 121 Million Euros in EU Aid Over Democratic Backsliding. 08.10.2024, https://civil.ge/archives/627707

35. ЕС лишит Грузию 121 млн евро – реакция представителя "Грузинской мечты". 08.10.2024, https://sputnik-georgia.ru/20241008/es-lishit-gruziyu-121-mln-evro---reaktsiya-predstavitelya-gruzinskoy-mechty-290254632.html

36. European Parliament, JOINT MOTION FOR A RESOLUTION on the democratic backsliding and threats to political pluralism in Georgia. 08.10.2024, https://www.europarl.europa.eu/doceo/document/ RC-10-2024-0070_EN.html

37. Резолюция Европарламента и гроша ломаного не стоит – Каладзе. 09.10.2024, https://sputnik-georgia.ru/20241009/rezolyutsiya-evroparlamenta-i-grosha-lomanogo-ne-stoit---kaladze-290296584.html

38. Депутат: Резолюция Европарламента – вмешательство в дела Грузии и призыв к войне. 10.10.2024, https://sputnik-georgia.ru/20241010/deputat-rezolyutsiya-evroparlamenta--vmeshatelstvo-v-dela-gruzii-i-prizyv-k-voyne-290303165.html

39. Deutscher Bundestag, Dokumente, Motion: A European future for Georgia, tabled by the SPD, Alliance 90/The Greens and FDP parliamentary groups. Berlin. https://www.bundestag.de/ dokumente/ textarchiv/2024/kw41-de-georgien-antrag-en-1023276?

40. Попытка подорвать дружбу – глава парламента Грузии осудил резолюцию Бундестага Германии. 11.10.2024, https://sputnik-georgia.ru/20241011/popytka-podorvat-druzhbu---glava-parlamenta-gruzii-osudil-rezolyutsiyu-bundestaga-germanii-290314800.html

41. Премьер Грузии назвал забракованный Западом закон "законом о прозрачности революции". 11.10.2024, https://sputnik-georgia.ru/20241011/premer-gruzii-nazval-zabrakovannyy-zapadom-zakon-zakonom-o-prozrachnosti-revolyutsii-290323520.html

42. European Commission, Foreign Affairs Council: press conference by Josep Borrell Fontelles, High Representative of the Union for Foreign Affairs and Security Policy and Vice-President of the European Commission. 14.10.2024, https://audiovisual.ec.europa.eu/en/video/I-261883

43. Заявление Борреля о Грузии оторвано от реальности – депутат. 15.10.2024, https://sputnik-georgia.ru/20241015/otorvano-ot-realnosti--v-gruzii-rezko-otvetili-na-zayavlenie-borrelya-290363263.html

44. Сравнение Грузии с Молдовой оскорбительно – Кобахидзе ответил Боррелю. 15.10.2024, https://sputnik-georgia.ru/20241015/sravnenie-gruzii-s-moldovoy-oskorbitelno---kobakhidze-otvetil-borrelyu-290371947.html

45. გაერთიანებული სამეფოს ელჩი გარეტ უორდი - „უცხოური გავლენის გამჭვირვალობის“ შესახებ კანონი არის არაპროპორციული, ახშობს სიტყვის თავისუფლებას და ახდენს მათ სტიგმატიზაციას, ვინც საზოგადოებისთვის სასარგებლო საქმეს აკეთებს. 15.10.2024,

https://www.interpressnews.ge/ka/article/816247-gaertianebuli-samepos-elchi-garet-uordi-ucxouri-gavlenis-gamchvirvalobis-shesaxeb-kanoni-aris-araproporciuli-axshobs-sitqvis-tavisuplebas-da-axdens-mat-stigmatizacias-vinc-sazogadoebistvis-sasargeblo-sakmes-aketebs

46.საქართველოს ახალგაზრდა იურისტთა ასოციაცია, სამართლებრივი ბრძოლა რუსული კანონის წინააღმდეგ სტრასბურგში გაგრძელდება. 17.10.2024, https://www.gyla.ge/post/samartlebrivi-brdzola-rusuli-kanonis-cinaagmdeg

47.შალვა პაპუაშვილი - გამჭვირვალობის რეესტრში რეგისტრირებულ ორგანიზაციათა რიცხვმა გადააჭარბა იმ ორგანიზაციებს, რომლებიც კანონს ასაჩივრებენ, 300-ზე მეტი განაცხადი კი დამუშავების პროცესშია. 17.10.2024, https://1tv.ge/news/shalva-papuashvili-gamchvirvalobis-reestrshi-registrirebul-organizaciata-rickhvma-gadaacharba-im-organizaciebs-romlebic-kanons-asachivreben-damatebit-300-ze-meti-ganackhadi-damushavebis-processhia/

48.Премьер Грузии назвал несправедливыми все обвинения Евросоюза. 18.10.2024, https://sputnik-georgia.ru/20241018/premer-gruzii-nazval-nespravedlivymi-vse-obvineniya-evrosoyuza-290420546.html

49.Это не угроза, а реальность" – посол ЕС сделал предупреждение Грузии. 18.10.2024, https://sputnik-georgia.ru/20241018/eto-ne-ugroza-a-realnost---posol-es-sdelal-preduprezhdenie-gruzii-290418949.html

50. Премьер Грузии назвал несправедливыми все обвинения Евросоюза. 18.10.2024, https://sputnik-georgia.ru/20241018/premer-gruzii-nazval-nespravedlivymi-vse-obvineniya-evrosoyuza-290420546.html

51. სააგენტო „ინტერპრესნიუსის“ ცნობით, ევროკავშირის წევრი 13 ქვეყნის ევროპის საკითხთა მინისტრები ერთობლივ განცხადებას ავრცელებენ. 21.10.2024, https://1tv.ge/news/evrokavshiris-wevri-13-qveynis-evropis-sakitkhta-ministrebi-ertobliv-ganckhadebas-avrceleben/

52.Папуашвили: заявление министров 13 стран ЕС по Грузии – это вмешательство в выборы. 21.10.2024, https://sputnik-georgia.ru/20241021/papuashvili-zayavlenie-ministrov-13-stran-es-po-gruzii---eto-vmeshatelstvo-v-vybory-290462208.html

53.Санкции в отношении Грузии имели обратный результат – Иванишвили. 22.10.2024, https://sputnik-georgia.ru/20241018/premer-gruzii-nazval-nespravedlivymi-vse-obvineniya-evrosoyuza-290420546.html

54.ირაკლი კობახიძე - ჩვენი ამბიციური მიზანია, 2030 წლისთვის ქვეყანა გახდეს ევროკავშირის სრულფასოვანი წევრი და ამისთვის ყველა პირობა იქნება მომზადებული. 24.10.2024, https://1tv.ge/news/irakli-kobakhidze-chveni-ambiciuri-mizania-2030-wlistvis-qveyana-gakhdes-evrokavshiris-srulfasovani-wevri-qveyana-da-amistvis-yvela-piroba-iqneba-momzadebuli/